



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԻ ՀԱԿԵԼՎԱԾ 1(9). 2009

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՏԻՄ
ԱՆԿՏԱՆԳԱՅԻՆ ՄԻԶՎԱՅՐԻ ԿԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ.
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՐՊԱՓՈՒՍՈՒՄ



ПЕРЕОЦЕНКА БЕЗОПАСНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ:
РЕГИОНАЛЬНЫЕ КОНФЛИКТЫ,
СТАБИЛЬНОСТЬ И ТРАНСФОРМАЦИЯ

REASSESSING SECURITY IN THE SOUTH CAUCASUS:
REGIONAL CONFLICTS,
STABILITY AND TRANSFORMATION

77 ԴԱՇԵՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱԿ ԿԱՆԱՅԱԿ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԱՂԳԱՅԻՆ ՈԱԶՄՎԱՐԿԱՆ ՇԵՏԱԴՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԻՏՈՒՏ



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ

1(9). 2009

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՆՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
 քաղաքական գիտությունների
 դոկտոր (Ռ-Դ), Ռ-ագմական
 գիտությունների ռուսաստանյան
 ակադեմիայի իսկական անդամ,
 հակաահաբեկչության գծով

փորձագետ (ԱՄՆ)
 (նախագահ)

Չիլինգարյան Գ. Ս.
 (գլխավոր խմբագիր)

Այդինյան Ռ. Ա.

Ապրիանով Է. Ա.

Ավետիսյան Վ. Պ.
 (գլխ. խմբ. տեղակալ)

Բաբայան Ն. Մ.

Գասպարյան Վ. Ս.

Գասպարյան Տ. Շ.

Դավթյան Ա. Մ.

Թունյան Վ. Վ.

Իսախանյան Մ. Ռ.

Խաչատուրով Յ. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Կարապետյան Մ. Ս.

Մաթևոսյան Ի. Ժ.

Մարգարյան Վ. Հ.
 (գլխ. խմբ. տեղակալ)

Մարտիրոսյան Ս. Ս.

Մարտիրոսով Լ. Ա.

Միրզաբեկյան Ա. Ռ.

Նազարյան Ա. Ս.

Սեդրակյան Ս. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Փարսադանյան Ա. Մ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆՎՏԱՆՔԱՅԻՆ
 ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ.
 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՎԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
 ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՐՊԱՓՈՒՍՈՒՄ**

ՀՀ Պաշտպանության նախարար *Սեյ-
 րան Օհանյանի* բացման խոսքը 7

Հայաստանի Հանրապետությունում
 Ֆրանսիայի Հանրապետության արտա-
 կարգ և լիազոր դեսպան *Սերժ Սինսովի*
 ողջույնի խոսքը 11

Հ. Ս. *Քոթանջյանի*, Հանրաքվեյն որպես
 «բարի կամքի» ժեստ. Ղարաբաղում պա-
 տերազմի և խաղաղության սցենարները
 Հարավային Կովկասում անվտանգության
 նոր ճարտարապետության ձևավորման
 համատեքստում 14

Վ. Ն. Կազիմիրով, Ղարաբաղում ան-
 հրաժեշտ է խաղաղության պարտադրում . . . 27

Ս. Մ. Մարկեղոնով, Հակամարտություն-
 ների ապաստեցում. Կովկասը, եվրասիա-
 կան և միջազգային անվտանգությունը
 Հարավային Օսեթիայում տեղի ունեցած
 հինգօրյա պատերազմից հետո 55

Ջալալ Դեյհանի, Իրանի անվտանգա-
 յին մոտեցումները Հարավային Կովկասի
 նկատմամբ 77

Թ. Շ. Պողոսյան, Հայաստանի արտա-
 քին անվտանգային քաղաքականություն.
 փոխլրացումը հնարավոր է 94

«РАБОЧИЕ ТЕТРАДИ»

ПРИЛОЖЕНИЕ К ВОЕННО-НАУЧНОМУ ЖУРНАЛУ «АЙКАКАН БАНАК»
ИНСТИТУТА НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 1(9). 2009

Издается с 2007 г. 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Аветисян В. П. (зам. гл. редактора), *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*,
Бабаян Н. М., *Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*,
Карапетян М. Н., *Карапетян М. С.*, *Маргарян В. Г.* (зам. гл. редактора),
Мартirosов Л. А., *Мартirosян С. С.*, *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*,
Назарян А. С., *Парсаганян А. М.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*,
Тоноян Д. Э., *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*

СОДЕРЖАНИЕ

ПЕРЕОЦЕНКА БЕЗОПАСНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ:

РЕГИОНАЛЬНЫЕ КОНФЛИКТЫ, СТАБИЛЬНОСТЬ И ТРАНСФОРМАЦИЯ

- Вступительное слово Министра Обороны РА *Сейрана Оганяна*. 7
- Приветственное слово Чрезвычайного и Полномочного Посла
Республики Франция в Республике Армения *Сержа Смесо* . . . 11
- Г. С. Котанджян*. Референдум—в качестве жеста доброй во-
ли: сценарии мира и войны в Карабахе в контексте формиро-
вания новой архитектуры международной безопасности 14
- В. Н. Казимиров*. В Карабахе необходимо принуждение к
миру 27 (41)*
- С. М. Маркегонов*. Размораживание конфликтов: Кавказ,
евразийская и международная безопасность после пятиднев-
ной войны в Южной Осетии 55 (66)
- Джалал Дейхани*. Безопасностные подходы Ирана в отно-
шении Южного Кавказа 77
- Т. Ж. Погосян*. Внешняя безопасностная политика Армении:
возможен ли комплементаризм? 94

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

«WORKING NOTEBOOKS»

APPENDIX TO THE DEFENSE-ACADEMIC JOURNAL «HAIKAKAN BANAK»
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES
MINISTRY OF DEFENSE, THE REPUBLIC OF ARMENIA

№ 1(9), 2009

Is published since 2007 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA)
(Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,
Avetisyan V. P. (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Karapetyan M. N., *Karapetyan M. S.*, *Khachatourov Y. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*, *Martirossov L. A.*,
Matevosyan I. Zh., *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,
Sedrakyan S. G., *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

CONTENTS

REASSESSING SECURITY IN THE SOUTH CAUCASUS: REGIONAL CONFLICTS, STABILITY AND TRANSFORMATION

Introduction by the RA Defense Minister <i>Seyran Ohanyan</i>	7
Welcoming speech of the Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of France to the Republic of Armenia <i>Serzh Smessov</i>	11 (12)*
<i>H. S. Kotanjian</i> . Referendum as a gesture of a good will: peace and war scenarios for Karabakh in the context of developing a new international security architecture	14
<i>V. N. Kazimirov</i> . Compulsion to peace is needed in Karabakh	27
<i>S. M. Markedonov</i> . Defrosting conflicts: the Caucasus, Eurasian and international security after the five-day war in South Ossetia	55
<i>Jalal Dehghani</i> . Iran's security approaches to the South Caucasus	77 (86)
<i>T. J. Poghosyan</i> . Armenia's foreign security policy: is complementarity possible?	94

* Numbers in brackets mean the page of the text in English.

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ա. Հ. Թռչունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Վ. Ս. Սարգսյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумян*, кандидат психологических наук, доцент;
Н. У. Аракелян, академик НАН РА;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
Г. А. Геворкян, академик НАН РА;
Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;
А. А. Манташян, академик НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджаниян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
В. С. Саркисян, академик НАН РА;
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
А. А. Трчунян, член-корреспондент НАН РА;
Ю. С. Чилингарян, академик НАН РА

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian*, Candidate of Psychological Sciences, Docent;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Y. S. Chilingarian, Full Member, NAS RA;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
R. G. Gevorkian, Doctor of Geological Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
V. S. Sargsian, Full Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor;
A. H. Trchounian, Fellow Correspondent, NAS RA

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ.
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄ

ՂԱՐԱԲԱՐՈՒՄ ԶԻՆԱԳԱԳԱՐԻ 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇ ՆՅՈՒԹԵՐ.
ԼՐԻՎ ՓԱԹԵԹԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ի ԵՎ ԼԻՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՍՏԵՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

ПЕРЕОЦЕНКА БЕЗОПАСНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ:
РЕГИОНАЛЬНЫЕ КОНФЛИКТЫ,
СТАБИЛЬНОСТЬ И ТРАНСФОРМАЦИЯ

НЕКОТОРЫЕ МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ,
ПОСВЯЩЕННОЙ 15-ЛЕТИЮ ПЕРЕМИРИЯ В КАРАБАХЕ.
МАТЕРИАЛЫ ПОЛНОСТЬЮ БУДУТ ОПУБЛИКОВАНЫ
НА АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ В СОВМЕСТНОМ СБОРНИКЕ
ИНСИ МО РА И ЛИОНСКОГО УНИВЕРСИТЕТА

REASSESSING SECURITY IN THE SOUTH CAUCASus:
REGIONAL CONFLICTS,
STABILITY AND TRANSFORMATION

SOME MATERIALS OF THE INTERNATIONAL ACADEMIC CONFERENCE,
DEDICATED TO THE 15th ANNIVERSARY OF CEASE-FIRE IN KARABAKH.
THE COMPLETE PACKAGE OF MATERIALS WILL BE PUBLISHED IN ENGLISH
IN THE JOINT COLLECTION OF THE INSS, MOD, RA AND LYON UNIVERSITY

ԵՐԵՎԱՆ—ԵՐԵՎԱՆ—YEREVAN

14 – 15.05.2009

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ.

Լիոնի «ժԱՆ ՄՈՒԼԻՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻԶՁԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ,
ՀՀ ՊՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԳԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ

ОРГАНИЗАТОРЫ:

ЦЕНТР МЕЖДУНАРОДНЫХ БЕЗОПАСНОСТНЫХ И ОБОРОННЫХ
ИССЛЕДОВАНИЙ ЛИОНСКОГО УНИВЕРСИТЕТА «ЖАН МУЛИН»,
ИНСТИТУТ НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ МО РА
И АКАДЕМИЧЕСКИЙ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ФОНД
ПОЛИТИЧЕСКИХ НАУК
ПРИ ФИНАНСИРОВАНИИ СО СТОРОНЫ
АРМЯНСКОГО ОБЩЕГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО СОЮЗА
И ФОНДА ПАРТНЕРСТВО ЕВРАЗИЯ

ORGANIZERS:

LYON CENTRE FOR INTERNATIONAL SECURITY AND DEFENCE STUDIES,
«JEAN MOULIN» UNIVERSITY,
THE INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES, MOD, RA,
THE ACADEMIC RESEARCH FOUNDATION OF POLITICAL SCIENCES,
AND FUNDED BY
THE ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
AND EURASIA PARTNERSHIP FOUNDATION

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ



Հարգելի՛ տիկնայք և պարոնայք:

Պատիվ ունեն ձեզ ողջունելու Հայաստանի հինավուրց մայրաքաղաք Երևանում: Անկախության ձեռքբերումից ի վեր անցած տասնութ տարիների ընթացքում Հայաստանը ձեռնամուխ է եղել կենսագործունեության բոլոր ոլորտներում համընդգրկուն բարեփոխումների իրականացմանը՝ նպատակ ունենալով ձևավորել ժամանակակից գլոբալացող աշխարհին լիովին ինտեգրված ժողովրդավարական քաղաքական համակարգ և մրցակցային տնտեսություն ունեցող պետություն:

Ինչպես ցանկացած այլ պետության, այնպես էլ Հայաստանի համար կարևոր առաջնահերթություններից են տարածաշրջանային անվտանգությունն ու համագործակցությունը:

Վերջին շրջանում ի հայտ են եկել մի շարք նոր նախաձեռնություններ, որոնք միտված են Հարավային Կովկասում անվտանգության ապահովմանը:

Տարածաշրջանում կայունության հաստատման և վստահության մթնոլորտի ձևավորման տեսանկյունից էական նշանակություն ունեն ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ անցյալ տարի մեկնարկած հայ-թուրքական բարձր մակարդակի բանակցությունները: Հայաստանը անկախության ձեռքբերումից ի վեր կողմ է արտահայտվել Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և այժմ էլ հավատարիմ է այդ դիրքորոշմանը:

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար կարևոր նշանակություն ունի 2008 թ. նոյեմբերին Ռուսաստանի Նախագահի միջնորդությամբ ստորագրված Մայնդորֆյան եռակողմ հռչակագիրը: Այն մեկ անգամ ևս փաստում է, որ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն այլընտրանք չկա:

Տարածաշրջանում կայունության ապահովմանն ուղղված նախաձեռնություններից են նաև Եվրամիության՝ մեկ շաբաթ առաջ պաշտոնապես մեկնարկած «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, որում ընդգրկված են Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունները, 2009 թ. փետրվարին ՀԱՊԿ-ի Արագ արձագանքման ուժերի ստեղծումը և Թուրքիայի կողմից առաջ քաշված՝ «Հարավային Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմի» ձևավորման առաջարկությունը: Հավատարիմ մնալով տարածաշրջանում

կայունության և համագործակցության մթնոլորտի ձևավորմանը նպաստելու դիրքորոշմանը՝ Հայաստանը մասնակցում է տվյալ նախաձեռնության վերաբերյալ ընթացող բանակցություններին:

Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի մշակման շուրջ քննարկումներ սկսելու առաջարկությունը, որով անցյալ տարի հունիսին հանդես եկավ Ռուսաստանի Նախագահ Դ. Մեդվեդևը, ևս էական նշանակություն ունի Հարավային Կովկասում անվտանգության համակարգի ձևավորման համար: Հայաստանը կողմնակից է տարածաշրջանային անվտանգության ապահովմանն ու կայունության ամրապնդմանը միտված ցանկացած նախաձեռնության և պատրաստ է դրանց շրջանակներում երկկողմ ու բազմակողմ քննարկումների անցկացմանը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ իր միջնորդական ջանքերն է շարունակում ԵԱՀԿ Մինսկի խումբը: Հայաստանը կարևորում է Մինսկի խմբի համանախագահության միջնորդական առաքելությունը և որևէ պատճառ չի տեսնում այդ գործընթացում առկա ձևաչափի փոփոխման համար:

Միևնույն ժամանակ, տարածաշրջանը գերծ չէ մարտահրավերներից և սպառնալիքներից: Մասնավորապես՝ Հայաստանի համար անմիջական ռազմական սպառնալիքներ են.

– Ղարաբաղյան հակամարտության առկայությունը և հակամարտող կողմերի միջև կարգավորման փոխհամաձայնեցված քաղաքական-իրավական հիմքեր չլինելը,

– Ադրբեջանի կողմից վարվող ռազմականացման քաղաքականությունը, ռազմական գերակայության հասնելու և Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ուժի կիրառմամբ լուծելու նրա ձգտումը,

– ՀՀ շրջափակումը և տարածաշրջանում նրան մեկուսացնելու քաղաքականությունը:

15 տարի առաջ այս օրերին ՀՀ-ն, ԼՂՀ-ն և Ադրբեջանը ստորագրեցին զինադադարի համաձայնագիր, որը գործում է մինչ օրս: Չնայած դրան՝ Ադրբեջանի Չինված ուժերը պարբերաբար խախտում են զինադադարի պայմաններն ու փորձում են ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում: Հայաստանը միշտ հանդես է եկել հակամարտության խաղաղ, փոխզիջումների վրա հիմնված կարգավորման օգտին, ցավոք, նույնը չի կարելի ասել Ադրբեջանի մասին: Այդ համատեքստում առավել լուրջ մտահոգության առիթ են տալիս Ադրբեջանի կողմից իրականացվող՝ Չինված ուժերի լայնածավալ վերազինման քաղաքականությունը և ռազմական բյուջեի ծավալների կտրուկ մեծացումը:

Ադրբեջանն արդեն իսկ բազմակի գերազանցել է Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրով նախատեսված առաստաղ-

ները, մի հանգամանք, որը լուրջ սպառնալիք է տարածաշրջանում հաստատված փխրուն կայունությանը: Այս քաղաքականությունն ուղեկցվում է Վարաբադյան հակամարտությունը զինված ուժի կիրառմամբ լուծելու ամենաբարձր մակարդակով հնչեցվող հայտարարություններով, ինչը պատճառում է լուրջ անհանգստություն՝ կապված ադրբեջանական կողմի իրական մտադրությունների հետ:

Ինչպես բոլոր պետությունների, այնպես էլ Հայաստանի համար, բացի անմիջական ռազմական սպառնալիքներից, առկա են նաև ռազմական վտանգներ, որոնց թվում են ՀՀ հարևան պետություններում և ընդհանրապես Հարավային Կովկասում անվտանգության միջավայրի ապակայունացումը, առկա կամ նոր հակամարտությունների հրահրումը, միջազգային ահաբեկչությունը, զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրադեղերի, հոգեմետ նյութերի անօրինական շրջանառությունը, մարդկանց առևտուրը:

Վերը թվարկված և այլ սպառնալիքների չեզոքացման համար Հայաստանն ընտրել է երկու հիմնական ուղի. բարեփոխումների իրականացմամբ ազգային պաշտպանական համակարգի հզորացում և ինտեգրման միջոցով անվտանգության միջազգային երաշխիքների ձեռքբերում: Այս երկու ուղիները փոխկապված են: Բարեփոխումների իրականացման ճանապարհին Հայաստանն ակտիվորեն օգտվում է ինչպես արևմտյան, այնպես էլ ռուսական փորձից՝ հավատարիմ մնալով փոխլրացման սկզբունքի վրա հիմնված մախաձեռնողական արտաքին քաղաքականությանը:

Հայաստանի անվտանգ ու կայուն զարգացման ապահովման գործում մենք կարևոր ենք համարում մասնակցությունը տարբեր միջազգային կառույցների՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, Անկախ Պետությունների Համագործակցությանը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, Եվրոպական Միությանն ու Եվրոպայի խորհրդին, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությանը և այլն: Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ, ակտիվորեն համագործակցում է նաև ՆԱՏՕ-ի և կազմակերպության անդամ գործընկեր պետությունների հետ՝ Եվրատալանտյան գործընկերության խորհրդի և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ իրականացնում է «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» և մասնակցում ՆԱՏՕ-ի «Պլանավորման և վերանայման գործընթացին»:

Հայաստանի համար գերակա է ռազմավարական գործընկերությունները Ռուսաստանի հետ: Դրա հետ մեկտեղ ՀՀ-ն կարևորում է ԱՄՆ-ի և այլ բարեկամ երկրների հետ երկկողմ համագործակցության զարգացումը:

Հայաստանի կողմից իրականացվող մախաձեռնողական և հավասարա-

կշռված արտաքին քաղաքականության վկայությունն են 2008 թ. ՀԱՊԿ-ի շրջանակներում Հայաստանում կայացած «Բնագիծ 2008» և Հայաստան–ՆԱՏՕ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում՝ «Համատեղ աղեղ» և «Համատեղ նիզակակիր» գորախաղերը:

Մենք վստահ ենք, որ տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման ասպարեզում այդ կազմակերպությունների ու համապատասխան ծրագրերի շնորհիվ ընձեռվող հնարավորություններն ու ռեսուրսներն ամեննչին սպառված չեն: ՌԻՍտի և մենք նպատակ ունենք խորացնելու մեր համագործակցությունը այդ կազմակերպությունների հետ բոլոր այն հարցերում, որոնց նկատմամբ մեր մոտեցումներն ու նրանց շահերը իրար չեն հակասում:

Ամփոփելով ելույթս՝ նշեմ, որ մենք կարևորում ենք տարածաշրջանային անվտանգությանը նվիրված միջազգային գիտաժողովները, որտեղ տարբեր երկրների՝ անվտանգային հետազոտություններով զբաղվող փորձագետները հնարավորություն ունեն արտահայտվելու և կարծիքներ փոխանակելու տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության խնդիրների շուրջ: Այս առումով գնահատելի է պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի համագործակցությունը Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի այն կենտրոնների հետ, որոնք զբաղվում են անվտանգային հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Այս գիտաժողովը, համոզված եմ, հարմար հրապարակ է Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի վերաիմաստավորման վերաբերյալ կարևոր առաջարկությունների և գաղափարների ներկայացման առումով: Գիտաժողովին մաղթում եմ արգասաբեր աշխատանք և հետաքրքիր հանդիպումներ մեր հյուրընկալ երկրում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ
ԴԵՍՊԱՆ ՍԵՐԺ ՍՄԵՍՈՎԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**



Ես հաճույքով մասնակցում եմ Լիոն-3 համալսարանի կազմակերպած գիտաժողովին:

Այն փաստը, որ Երևանում գործնականում միաժամանակ տեղի է ունենում երկու միանման իրադարձություն, վկայում է, որ միջազգային հանրության հետաքրքրությունը աճում է ամբողջ տարածաշրջանի, ինչպես նաև նրա անվտանգությանն ու կայունությանն ուղղված մարտահրավերների նկատմամբ:

Եվրամիությունը Հարավկովկասյան տարածաշրջանն արդեն ընկալում է ոչ որպես ծայրամասային, այլ որպես Եվրոպային անմիջականորեն հարող

շրջան: Եվրոպական հարևանության քաղաքականության, վերջերս նաև՝ Արևելյան գործընկերության մեջ նրա ներգրավումը վկայում է, որ այդ ընկալման մեջ տեղի է ունեցել արմատական փոփոխություն:

Տարածաշրջանի նկատմամբ ընդհանրապես միջազգային հանրության և մասնավորապես ԵՄ-ի աճած հետաքրքրության մեկ այլ ակնհայտ պատճառ է էներգետիկ խնդիրը, քանի որ տարածաշրջանը հանդես է գալիս որպես Կասպյան տարածաշրջանի էներգառեսուրսները հասանելի դարձնող այլընտրանքային միջանցք:

2008 թ. օգոստոսին Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները պարզորոշ կերպով ցույց տվեցին, որ տարածաշրջանի չլուծված հակամարտությունները որակելու համար պատեհ չէ խոսել սառեցված հակամարտությունների մասին: Ռուսաստանի և Վրաստանի միջև առճակատումը հանգեցրեց տարածաշրջանում խորը փոփոխությունների՝ ստեղծելով նոր սպառնալիքներ, նոր հաշվեկշիռներ և նոր ընկալումներ: Եվրամիության ներգրավումը Ֆրանսիայի նախագահության շրջանում՝ ճգնաժամի հենց սկզբից և հետո, ցույց է տալիս, որ ամբողջ տարածաշրջանի կայունության դեմ ուղղված սպառնալիքները ընկալվել և ընկալվում են հստակ կերպով: Վրաստանում ներքաղաքական իրավիճակի վատթարացումը մտահոգում է ոչ միայն Վրաստանին, այլև բարեկամ հարևաններին:

Մինչդեռ ժամանակ, ի հայտ են եկել նոր հնարավորություններ և՛ հակամարտությունների կարգավորման, և՛ ամբողջ տարածաշրջանի համար: Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կանոնավորման արագացումը, որ դեռ պետք է ավարտին հասցվի, անկասկած, կապված է Վրաստանի իրադարձությունների հետ:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կարելի է հուսալ, թե Վրաստանի իրադարձությունները պետք է ապացուցած լինեն, որ բանակցությունների միջոցով կարգավորումն այլընտրանք չունի, ուժի գործադրումը լուծում չէ, և, թվում է՝ հասկանալի է, որ առկա վիճակը չի կարող հավերժ պահպանվել:

Թեև Լեռնային Ղարաբաղի հարցով բանակցությունները դեռ չեն հասել բեկումնային կետի, սակայն կա առաջընթաց շնորհիվ Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների անմիջական ներգրավման (նրանք մեկ տարում հանդիպել են չորս անգամ, մի քանի շաբաթից կրկին կհանդիպեն Սանկտ-Պետերբուրգում)՝ և նրանց համաձայնության՝ բանակցությունները վարելու Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջարկված Մադրիդյան սկզբունքների հիման վրա:

Պետք է վերջ տալ ռազմաշունչ քարոզչությանը և Հայաստանում ու Ադրբեյջանում հասարակական կարծիքը նախապատրաստել ընդունելու անհրաժեշտ զիջումներ, որոնց վրա հիմնվի յուրաքանչյուր ապագա համաձայնություն:

Ես չեմ մեկնաբանի տարածաշրջանում այն միջազգային կազմակերպությունների դերը, որոնք վաղվանից կգործեն այստեղ, բացառությամբ ԵՄ-ի, քանի որ այսօրվա գիտաժողովը տեղի է ունենում Պրահայում Արևելյան գործընկերության մեկնարկից մի քանի օր անց: Հուսով եմք, որ այդ նախաձեռնությունը կնպաստի տարածաշրջանի կայունությանը՝ քաղաքական համագործակցության զարգացումը, ինչպես նաև տնտեսական ինտեգրումը խթանելու և քաղաքական բարեփոխումները խրախուսելու միջոցով: Կարևոր է նկատի ունենալ, որ բախվելով եղած մարտահրավերներին՝ մենք պետք է բաց լինենք տարածաշրջանային այլ դերակատարների, հատկապես՝ Ռուսաստանի և Թուրքիայի համար:

WELCOMING SPEECH OF THE AMBASSADOR
EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY
OF THE REPUBLIC OF FRANCE
TO THE REPUBLIC OF ARMENIA SERZH SMESSOV

It is a pleasure for me to take part in this Conference organized by the University of Lyon III.

The fact that we have two similar events in Yerevan practically at the same time shows, if necessary, the growing interest of the international community for the region as a whole and for the security and stability challenges it has to face.

For the European Union, the South Caucasus region is no longer perceived as peripheral but as a part of the immediate vicinity of Europe. Its inclusion in the Neighbourhood Policy and recently in the Eastern

Partnership proves that a radical change in perception has occurred.

The other reason for the increased attention of the international community in general, and of the EU in particular, for the region is obviously the energy issue, as the region appears as an alternative corridor giving access to the energy resources of the Caspian region.

The events in Georgia in August, 2008, have clearly shown that it has become inappropriate to talk about frozen conflicts to qualify the unresolved conflicts in the region. The confrontation between Russia and Georgia has led to deep changes in the region, creating new threats, new balances and new perceptions. The involvement of the EU, during the French presidency from the very beginning of the crisis and afterwards, shows that the threats for the stability of the entire region were and are clearly perceived. The degradation of the internal political situation in Georgia is a matter of concern not only for Georgia but for the neighbourly countries as well.

At the same time, new opportunities for conflicts settlements and for the region as a whole have appeared. The acceleration of the process of normalization of the relationship between Turkey and Armenia, which has still to be completed, is, no doubt, linked with the events in Georgia.

Regarding Nagorno-Karabakh, one can hope that the events in Georgia will have proved that there is no alternative to a negotiated settlement and that the use of force is not the solution, and it seems to be understood that the status quo cannot be kept for ever.

Although the negotiation on Nagorno-Karabakh hasn't reached yet a turning point, progress have been achieved due to the direct involvement of the Armenian and Azerbaijani Presidents who have met four times in a year and will again meet in Saint-Petersburg in a few weeks to keep negotiating on the basis of the Madrid principles proposed by the Co-chairs of the Minsk Group.

An end should be put to militaristic propaganda and public opinion in Armenia and Azerbaijan should be prepared to accept the necessary concessions on which any future agreement will have to rest.

I will not comment on the role of the international organizations in the region, which will be dealt with tomorrow, with one exception – the EU – as today's conference is taking place a few days after the launching of the Eastern Partnership in Prague. That initiative, we hope, will contribute to the stability of the region by promoting the development of political cooperation, as well as economic integration and by encouraging political reforms. It is important to keep in mind that in order to face the existing challenges we need to be open to other regional players, especially to Russia and Turkey.

ՀԱՆՐԱՔՎԵՆ ՈՐՊԵՍ «ԲԱՐԻ ԿԱՄՔԻ» ԺԵՍԱՏ.
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Հ. Ս. ՔՈԹԱՆՉՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների
դոկտոր (ՌԳ), Ռուսաստանի Ռազմական գիտությունների ակադեմիայի
խկական անդամ, հակաախարեկչության գծով փորձագետ գիտնական (ԱՄՆ),
ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ



Մեր խորհրդաժողովը կայանում է
այնպիսի պայմաններում, երբ շահա-
գրգիռ դերակատարներն ինտենսիվ
կերպով որոնում են կայուն համաշխար-
հային, առաջին հերթին՝ եվրոպական,
համասեռ անվտանգային տարածու-
թյան ձևավորման ուղիներ: Աշխարհի
առաջատար մասնագետները որպես
միջազգային անվտանգության նոր ճար-
տարապետության կարևոր հիմք դիտում

են այն սկզբունքի պահպանումը, ըստ որի՝ բացառվում է մի սուբյեկտի
անվտանգության ապահովումն ի հաշիվ մեկ այլ սուբյեկտի:

* Սույն տեքստի ռուսերեն տարբերակը տեղադրված է «Ռեգնում» լրատվական գործա-
կալության կայքում (<http://www.regnum.ru/news/1164397.html>) և տպագրվել է «Գոլոս
Արմենիի» թերթի 2009 թ. ապրիլի 28-ի համարում, անգլերեն տարբերակը տեղադրված է Հար-
վարդի համալսարանի Սևծովյան անվտանգության ծրագրի կայքում ([http://www.harvard-
bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20
Security%20South%20Caucasus%20Conference.pdf](http://www.harvard-bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf)):

Русский вариант настоящего текста размещен на сайте информационного
агентства «Регнум» (<http://www.regnum.ru/news/1164397.html>) и опубликован в
газете «Голос Армении» от 28 апреля 2009 г., английский же вариант размещен на
сайте Программы Черноморской безопасности Гарвардского университета ([http://
www.harvard-bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20
Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf](http://www.harvard-bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf)).

The Russian version of the text is placed on the Information Agency «Regnum»
website (<http://www.regnum.ru/news/1164397.html>) and it was published in the issue of
the 28 April, 2009, of the newspaper «Golos Armenii», and the English version is placed on
the Black Sea Program website of the Harvard University (<http://www.harvard-bssp.org/>)

Այսօրվա համաժողովը վերլուծաբանների ընկերակցության ուշադրութ-
յունը կենտրոնացնում է մեր պայթյունավտանգ տարածաշրջանի՝ Հարավային
Կովկասի անվտանգային բնութագրերի գնահատման նկատմամբ նման
մոտեցման կիրառման հնարավորության վրա¹: Մեր կարծիքով՝ խոսքը պետք
է առաջին հերթին վերաբերի անցյալ տարի Վրաստանում տեղի ունեցած
պատերազմի ողբերգական հետևանքներից կշռադատված դասեր քաղելուն²
և նախկին մետրոպոլիաների կողմից պատերազմի վերսկսմամբ տարածա-
շրջանային հակամարտությունների լուծման փորձի կրկնության հնարավոր-
ությանը՝ այս անգամ արդեն Ղարաբաղում:

Ինչպես հիշում եք, վերջին չորս տարիներին ռազմավարական հետազո-
տությունների մեծ թվով կենտրոնների համար գլխավոր թեմաներից մեկն էր
տարածաշրջանային հակամարտությունների ապաստառեցման ռազմաքաղա-
քական ու ռազմական տեխնոլոգիաների մշակումը³: Ըստ էության, եթե իրերն
անվանենք իրենց իսկական անուններով, հիմքեր ունենք փաստելու նման
փորձերի ձախողումը Կովկասում, որտեղ հիշյալ տեխնոլոգիաները կիրառ-
վեցին այնպիսի գաղութարարական պատերազմների ձևով, որոնք զինված
ուժերի միջոցով իրենց տարածքային ամբողջականության վերականգնման
նպատակով իրագործված օպերացիաների քողի տակ սանձազերծեցին նախ-
կին մետրոպոլիաները՝ ճնշելով փաստացի ինքնորոշված ժողովուրդների
կամքը:

static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf).

¹ Տես *Dr. Hayk Kotanjian*. Guidelines on Developing Armenian National Security Strategy in the Context of Regional Security Architecture of the South Caucasus. Monograph, SNSEE-NSOOC, NDU, USA. Washington – Yerevan, 2004–2005:

² Տես *Dr. Hayk Kotanjian*. Azerbaijan: anti-Democratism and Colonialism. A Glance at the Perspective of Regional Security after Kosovo. «REGNUM» News Agency, 12.02.2008 (տեքստը տարածվել է Երևանում ԱՄՆ-ի դեսպանատան Հասարակության հետ կապերի բաժնի Տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի կողմից):

³ Տես *Dr. Ceslav Ciobanu* (VSU Eminent Scholar, Associate Professor of Economics, Ambassador (ret.), Senior Research Scholar, «Center for Security and Science»). Political Economy of «Frozen Conflicts» in ex-Soviet States: Challenges and Prospects for the U.S. and Russia. «Virginia State University International Conference», April, 2007 (pdc.ceu.hu/archive/00003276/01/political_economy.pdf); ֆուև՝ *Dr. Ceslav Ciobanu*. Frozen and Forgotten Conflicts in the post-Soviet States: Genesis, Political Economy and Prospects for Solution. «United States Institute of Peace», «Virginia State University». Richmond, 2008 (http://www.ipp.md/files/Publicatii/2008/USIP_manuscript_MAR_13_08__Moldova_.doc); ֆուև՝ *Андрей Сафонов*. Как разморозить конфликты? «Новая Газета Онлайн Приднестровье». 04.06.2008 (<http://novaiagazeta.org.ru/index.php?newsid=259>); ֆուև՝ «ЕС будет активно участвовать в разрешении «замороженных конфликтов» на Южном Кавказе». ИА «REGNUM», 04.05.2006 (<http://www.regnum.ru/news/634636.html>):

Ադրբեջանը պատրաստվում է «սպասառեցման» այս մոդելը կիրառել Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ: Բաքվի իշխանությունները անսահմանափակորեն մեծացնում են իրենց ռազմական ներուժն ու սաստկացնում ռևանշիստական հայտարարությունները, «տարածքային ամբողջականության վերականգնման» համար պատերազմի են նախապատրաստվում այնպիսի դիվանագիտական ձեռնարկումների քողի ներքո, որոնք նպատակաուղղված են սպասվելիք տարածաշրջանային մասշտաբի նոր համակարգային, առաջին հերթին՝ մարդասիրական, աղետի արդարացմանը միջազգային հանրության կողմից:

Վերջերս կայացած Անվտանգության հարցերով մյունխենյան խորհրդաժողովը, Քսանյակի լոնդոնյան գազաթնաժողովը, Ստրասբուրգում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի Հոբելյանական գազաթնաժողովը զգալի չափով նորացրեցին մեր պատկերացումները համաշխարհային համակարգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ձևավորվող համընդհանուր անվտանգության եվրոպական ու տարածաշրջանային հատվածների ճարտարապետության ուրվագծերի մասին⁴: Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության օպտիմալ ճարտարապետության որոնումը վերջին ժամանակներս լրացվեց Կովկասում կայունության ու համագործակցության գծով Թուրքիայի նախաձեռնությամբ⁵, ԵՄ-ի «Արևելաեվրոպական գործընկերություն» նոր ծրագրի շրջանակներում ծավալվելիք տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ խորհրդատվություններով⁶: Տվյալ նախաձեռնությունների նպատակն է Հարավային Կովկասում կայունության պահպանմանն ուղղված այն միջազգային աջակցության ներուժի մեծացումը, որը ցուցաբերում են ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն՝ իր Միսկի խմբով հանդերձ, ՀԱՊԿ-ը՝ Արագ արձագանքման կոլեկտիվ ուժերի ստեղծմամբ⁷, ԵՄ-ը՝ իր «Եվրոպա-

⁴ Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Մյունխենի Անվտանգության քաղաքականության հարցերով համաժողովում»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 07.02.2009 (<http://www.president.am/events/news/arm/?search=Մյունխեն&id=395>):

⁵ Տես *Դևիդ Չաքար*, Թուրքիայի դերը Կովկասում. Կովկասում կայունության և համագործակցության պլանֆորմ: «Աշխատանքային տեսերթ», 2008, հմ 3–4:

⁶ Տես «External Relations. Eastern Partnership». The Official site of the European Commission (http://ec.europa.eu/external_relations/eastern/index_en.htm):

⁷ Տես «В Кремле состоялась внеочередная сессия Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности (ОДКБ)». Официальное интернет-представительство ОДКБ (<http://www.dkb.gov.ru/start/index.htm>); նաև՝ «ՀԱՊԿ Կոլեկտիվ անվտանգության խորհրդի և ԵՎԲԱԶԵՄ Միջպետական խորհրդի արտահերթ նիստերը Մոսկվայում»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 04.02.2009 (<http://www.president.am/events/visits/arm/?visits=1&id=52>), նաև՝ «Внеочередные заседания Совета коллективной безопасности ОДКБ и Межгосударственного совета ЕврАзЭС в Москве». Официальный сайт Президента РА, 04.02.2009 (<http://www.president.am/events/visits/rus/?visits=1&id=52>); նաև՝ «Extraordinary sessions of the Council of the CSTO and EurAsEC in Moscow». The Official site of the President of

կան հարևանություն» ինտեգրային ծրագրով⁸, ՆԱՏՕ-ն՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության համաժողովները: Դրան են միտված նաև տարածաշրջանային այնպիսի դերակատարների քաղաքական-դիվանագիտական ջանքերը, ինչպիսիք են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Թուրքիան և Իրանը:

Ղարաբաղում պատերազմի չվերսկսման հուսադրող գործոն է այն, որ Մինսկի խմբի համանախագահները որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ու լուծման հիմքային սկզբունքներ հռչակեցին ՄԱԿ-ի Կանոնադրության երեք հիմնադրույթները՝ «ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն և ժողովուրդների ազատ ինքնորոշում»⁹: Հարավային Կովկասում խաղաղության պահպանման վրա, անշուշտ, դրական ազդեցություն է գործում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև անընդմեջ ընթացող երկխոսությունը, որն ուղեկցվում է Մինսկի խմբի համանախագահների խորհրդատվություններով: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման գործընթացի շարունակման համար կարևոր խթան պետք է համարել Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի ղեկավարների կողմից Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ մայնորթյան հռչակագրի ստորագրումը, որը տեղի ունեցավ 2008 թ. նոյեմբերին ՌԴ Նախագահի նախաձեռնությամբ¹⁰:

the RA, 04.02.2009 (<http://www.president.am/events/visits/eng/?visits=1&id=52>); Գևու՝ *Владимир Кузьмин, Михаил Фалалеев, Юрий Гаврилов*. Сумма сил. Вчера ОДКБ создала коллективные силы оперативного реагирования. «Российская газета», Центральный выпуск № 4842 от 05.02.2009 г. (<http://www.rg.ru/2009/02/05/armiya.html>):

⁸ Տե՛ս «EU in the World. European Neighbourhood Policy». The Official site of the European Commission (http://ec.europa.eu/world/enp/index_en.htm#):

⁹ «Сопредседатели Минской группы ОБСЕ представили главе МИД Армении результаты проведенных в Баку и Степанакерте встреч». Агентство международной информации «Новости-Армения», 02.03.2009 (<http://www.newsarmenia.ru/arm1/20090302/42034520.html>); Գևու՝ «Прорыв в урегулировании Карабахского конфликта возможен в мае-июне – Брайза». Агентство международной информации «Новости-Азербайджан», 16.04.2009 (<http://www.newsazerbaijan.ru/karabakh/20090416/42820844.html>); Գևու՝ «Минская группа ОБСЕ осудила нарушение режима прекращения огня в Карабахе». ИА «REGNUM», 05.03.2009 (<http://www.regnum.ru/news/1133901.html>); Գևու՝ «Военного решения Нагорно-карабахского конфликта не существует: заявление Сопредседателей МГ ОБСЕ». ИА «REGNUM», 19.02.2009 (<http://www.regnum.ru/news/1127568.html>):

¹⁰ Տե՛ս «Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации». 02.11.2008 г., Московская область, замок Майендорф. Официальный сайт Президента России (<http://www.kremlin.ru/text/docs/2008/11/208670.shtml>):

Հարավային Կովկասում պատերազմի չվերականգնող միտված երկխոսության ինտենսիվացմանը նպաստում է այն հանգամանքը, որ ՌԴ, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի ռազմավարական շահերի տիրոջում համասեռ անվտանգային միջավայրի ձևավորման համար լուծումների որոնումներում, այլ պետությունների ղեկավարների հետ մեկտեղ, ներգրավվել են նաև մեր տարածաշրջանում առաջատար դերակատարների թվին պատկանող երկրների այնպիսի համեմատաբար նոր առաջնորդներ, ինչպիսիք են Ռուսաստանի Նախագահ Գեորգի Մեդվեդևը, ԱՄՆ-ի Նախագահ Բարակ Օբաման, Ֆրանսիայի Նախագահ Նիկոլա Սարկոզին և Գերմանիայի Կանցլեր Անգելա Մերկելը: Մեր տարածաշրջանը, ինչպես և ամբողջ աշխարհը, մեծ նշանակություն է տալիս ԱՄՆ-ի նոր վարչակազմի ուրվագծվող երկխոսությանը տարածաշրջանի քաղաքական-անվտանգային ընկերակցության այնպիսի կարևոր անդամի հետ, ինչպիսին է նախագահական ընտրություններին նախապատրաստվող Իրանը, ինչպես նաև Մերձավորարևելյան-Հարավասիական տարածաշրջանի մի շարք առանցքային դերակատար պետությունների հետ¹¹:

Տարածաշրջանում քաղաքական-անվտանգային իրադրության հավասարակշռության պահպանմանն զգալի չափով նպաստում է նաև Հայաստանի Նախագահի նախաձեռնությունը՝ միտված ՀՀ-ի և ԹՀ-ի միջև առանց նախապայմանների միջպետական հարաբերությունների հաստատման հնարավորության վերաբերյալ հայ-թուրքական երկխոսության մեկնարկմանը: Տվյալ փուլում Կովկասում խաղաղության պահպանման գործում պրագմատիկ ներդրում կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ուղղված ջանքերի կենտրոնացումը¹²:

¹¹ Stu «Obama offers Iran «new beginning»». «BBC News», 20.03.2009 (<http://news.bbc.co.uk/2/hi/americas/7954211.stm>); նաև՝ «Obama Offers Direct Nuclear Talks With Iran». «SKY News», Website of the Year, 09.04.2009 (<http://news.sky.com/skynews/Home/World-News/Barack-Obama-Offers-Direct-Talks-With-Iran-Over-Nuclear-Programme-And-Issues-Warning-To-Israel/Article/200904215258771?f=rss>); նաև՝ «Совместное заявление Президента Российской Федерации Д. А. Медведева и Президента Соединенных Штатов Америки Б. Обамы относительно переговоров по дальнейшим сокращениям стратегических наступательных вооружений». Официальный сайт Посольства Соединенных Штатов Америки, Москва, Россия, 01.04.2009 (http://russian.moscow.usembassy.gov/st_040109b.html); նաև՝ «Obama In Turkey: Meets With Leaders, Addresses Parliament». «The Huffington Post», 06.04.2009 (http://www.huffingtonpost.com/2009/04/06/obama-meets-with-abdullah_n_183399.html); նաև՝ «Obama calls for talks with Iran over Iraq». «Breitbart.com», 08.04.2009 (http://www.breitbart.com/article.php?id=080408220807.ud9xv11e&show_article=1); նաև՝ *Michael R. Gordon and Jeff Zeleny*. Obama Envisions New Iran Approach. «The New York Times», 02.11.2007 (http://www.nytimes.com/2007/11/02/us/politics/02obama.html?_r=1):

¹² Տես «Նախագահ Մերձ Սարգսյանի հրավերով այսօր Հայաստան է ժամանել Թուրքիայի Նախագահ Աբդուլլահ Գյուլը»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք. 06.09.2008

Նման պայմաններում մեր տարածաշրջանում կայունության և անվտանգության երաշխավորվածությունը մի պրոբլեմ է, որը պահանջում է մեր գիտաժողովի կարգի միջազգային համաժողովներում մասնագիտական իմաստավորում և պատասխանատու որոշումներ ընդունող ազգային ու միջազգային կենտրոնների կողմից քաղաքական-անվտանգային առաջարկությունների ձևավորում:

Հարավարևելյան Կովկասի անվտանգությունը առաջին հերթին պայմանավորվում է այն գաղութարարական պատերազմի չվերսկսման երաշխիքներով, որը մասխկին մետրոպոլիան հանձին Ադրբեջանի կարող է սանձագերծել միջազգային հանրության կողմից չճանաչված, սակայն փաստացի օրինապատշաճ ձևով ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ¹³, որն ստեղծվել է Ժնևյան համաձայնագրերի 1-ին լրացուցիչ արձանագրության համաձայն որպես միջազգային ու ազգային-ազատագրական հակամարտություն մույնականացվող Ղարաբաղյան հակամարտության հետևանքով¹⁴:

Ղարաբաղում պատերազմի վերսկսման սպառնալիքի գնահատման համար հատուկ ուշադրության են արժանի հետևյալ գործոնները, որոնք ազդում են ուժի միջազգային կենտրոնների կողմից Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության վերաբերյալ ընդունվող որոշումների անաչառության վրա.

- միջազգային հանրությունում ադրբեջանական իշխանությունների կողմից Ղարաբաղյան հակամարտության մեկզափոխված մույնականացման քաղաքական ու քարոզչական արգասիքների առաջմղումը. նրանք աղավաղում են այդ հակամարտության ազգային-ազատագրական բնույթը, իրավաքաղաքական ու պատմական հիմքերը, ժխտում ԼՂՀ ստեղծման օրինականությունը, ինչպես նաև լրության են մատնում այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիները 1991 թ. դեկտեմբերին Բաքվի ցուցումով բոյկոտեցին ադրբեջանցի ընտրողներին հասցեագրված հայ համայնքի հրավերը՝ մասնակցելու ԱդրԽՄՀ հայաբնակ Շահումյանի շրջանի ու մինչ այդ Ադրբեջանի

(<http://www.president.am/events/news/arm/?search=Գյուլ&pn=1&id=172>), *նսևի*՝ «Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազույցը բուրբական «Ռադիկալ» օրաթերթին»: ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 28.08.2008 (<http://www.president.am/events/news/arm/?search=Գյուլ&pn=1&id=160>); *նսևի*՝ «Gül in landmark visit to Armenia». «BBC News», 06.09.2008 (<http://news.bbc.co.uk/2/hi/europe/7602066.stm>):

¹³ Stu «Декларация о предоставлении независимости колониальным странам и народам». ООН, Генеральная Ассамблея. «Официальные отчеты. XV сессия. Резолюции». Нью Йорк, 1961, сс. 74 – 75:

¹⁴ Stu «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 г., касающийся защиты жертв международных вооруженных конфликтов» (Протокол I). Часть I, статья 1, п. 4. «Права человека». «Сборник международных договоров», т. I (часть вторая), «Универсальные договоры». ООН. Нью Йорк – Женева, 1994, с. 1028:

իշխանությունների կողմից ԽՍՀՄ օրենսդրության խախտմամբ կազմալուծված ԼՂԻՄ-ի տարածքի կարգավիճակի հարցով հանրաքվեին¹⁵,

• իրավասու միջազգային կազմակերպությունների այն պասիվությունը, որով նրանք, չնայած Վրաստանում տեղի ունեցած պատերազմի ողբերգական հետևանքներին, վերաբերվում են Ղարաբաղում նոր պատերազմի սանձազերծման նպատակով Ադրբեջանի ինտենսիվ ռազմականացմանը՝ ԵՄԶՈՒ պայմանագրով նախատեսված թույլատրելի առաստաղների բազմակի գերազանցմամբ¹⁶,

• ՀՀ տարածքի նկատմամբ Ադրբեջանի հրապարակային պետական զավթողական նկրտումները, որոնց ուղեկցում են Կենտրոնական Ասիայից ադրբեջանցիների թյուրք նախնիների եկվորության փաստի նենգափոխումը, իրենց բնօրրանում հայերի՝ որպես եկվորների հռչակումն ու բազում հազարամյակների ընթացքում ստեղծված հայկական մշակութային ժառանգության վերագրումը ադրբեջանցիների նախնիներին¹⁷,

• այն հանգամանքը, որ Ադրբեջանի իշխանություններն առաջ են քաշում ադրբեջանական ժողովրդի նկատմամբ հայերի ու ռուսների կողմից իրագործված, սակայն Կովկասի պատմության մեջ իրականում երբեք տեղի չունեցած

¹⁵ Տես «Закон АЗР «Об упразднении НКАО АЗР», 26 ноября 1991 года». «Ведомости ВС АЗР», 1991, № 24; նաև՝ *С. Золян. СБСЕ в Карабахском Конфликте* (1992 год), «Нагорный Карабах: Проблема и Конфликт». Глава 6, «ArmenianHouse.org» (<http://www.armenianhouse.org/zolyan/nf-ru/karabakh/6.html>). «Հետազայում Լեռնային Ղարաբաղի և հարևան Շահումյանի շրջանի հայ համայնքը հռչակեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը (ԼՂՀ անկախությունը հռչակվեց 06. 01. 1992 թ.՝ հանրաքվեից հետո, արդեն նորընտիր Գերագույն խորհրդի կողմից, մինչդեռ 02. 09. 1991-ին՝ Ադրբեջանի կողմից 1918–1920 թթ. պետական անկախության վերականգնման հռչակումից հետո, ԼՂՀ-ն ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու մասին ԽՍՀՄ օրենքին համապատասխան հայտարարվեց դաշնային տարածք՝ հանրաքվեի միջոցով կարգավիճակի հետագա ճշգրտմամբ.– *Ս. Զ.*): Դա Ադրբեջանում առաջ բերեց բուռն արձագանք՝ ներառյալ Ազգային ասամբլեայի կողմից 1991 թ. նոյեմբերի 26-ի բանաձևի ընդունումը, ըստ որի՝ մարզի ինքնավարությունը վերացվում էր, և այն դրվում էր Ադրբեջանի անմիջական ղեկավարման տակ: Սակայն տարածաշրջանի ներսում անկախության հռչակմանը հետևեցին նոր խորհրդարանի ընտրություններ ու հանրաքվե, որը ճնշող մեծամասնությամբ վավերացրեց Անկախության հռչակագիրը, թեև ադրբեջանական բնակչությունը բոյկոտեց այդ իրադարձությունը»:

¹⁶ Տես *Hayk Kotanjian. Azerbaijan: anti-Democratism and Colonialism in the Perspective of Regional Security*. «REGNUM» (<http://www.regnum.ru/english/953962.html>) (Report at the conference called «Caucasus and Middle East countries as potential partners in the process of forming regional security system». Yerevan, 07.02.2008):

¹⁷ Տես «Азербайджан – Армения – Карабах. Академическое сообщество Армении обратилось к Минской группе ОБСЕ», 27 декабря 2005 г. (http://www.roi.ru/news/misc/newsng/05/12/27_061.htm); նաև՝ «В Азербайджане продолжается фальсификация истории региона». Заявление академического сообщества Армении, ИА «REGNUM», 30.12.2005 (<http://www.regnum.ru/news/568526.html>):

ցեղասպանության կեղծ գիտական «հիմնավորումը», ինչն ուղեկցվում է Ադրբեջանի Նախագահի հրամանագրով այդ կեղծիքի ամրագրմամբ և «Ցեղասպանության օրվա»՝ որպես պետական Համազգային սգո օրվա հռչակմամբ,

- Բաքվի իշխանությունների կողմից ադրբեջանական բնակչության շրջանում ի դեմս հայ ժողովրդի թշնամու կերպարի սերմանումը, ինչն ուղեկցվում է Խոջալու ավանի ադրբեջանական ու թուրք-մեսխեթական բնակչության նկատմամբ հորինված ցեղասպանական գործողության ակտիվ շահարկմամբ, թեև Ադրբեջանի այդ ժամանակվա Նախագահ Ա. Մութալիբովի հավաստմամբ՝ իրականում այդ ցեղասպանությունը իշխանությունը զավթելու նպատակով իրականացրել էին ադրբեջանական ընդդիմության զինված ջոկատները¹⁸,

- Բաքվի ղեկավարության իրականացրած այն ցինիկ ձեռնածությունները, որոնց Ղարաբաղյան հակամարտությունը հոգուտ Ադրբեջանի լուծելու համար ընթացող աշխարհաքաղաքական առուծախում ենթարկվում է միջազգային հանրության քաղաքական ռեսուրսը՝ այլընտրանքային փոխադրառոլիներով Եվրոպան ամխաջրածնային վառելիքով ապահովելու վերաբերյալ նախագծերի կիրառմամբ,

- Ադրբեջանում Ալիևների ընտանիքի ժառանգական վարչակարգի հակա-ժողովրդական էության խորացումը. ադրբեջանական պետության՝ որպես հակաժողովրդական «նավթային սուլթանության» իրավաքաղաքական համակարգի կայացումը, մի համակարգ, որը ամենևին չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղում հաստատված ժողովրդավարության մակարդակին:

Հարավային Կովկասում պատերազմի վերսկսման հնարավորության գնահատման արդյունքներն ամփոփելով՝ հիմք ունենք պնդելու, որ Ադրբեջանի ղեկավարությունը, օգտագործելով սուլթանական տիպի նավթային ժառանգական դիկտատուրաներին բնորոշ կեղծ ժողովրդավարական տերմինաբանությունը, ԼՂՀ-ի դեմ նոր ռազմական ագրեսիայի նպատակամղված նախապատրաստումը քողարկում է Հայաստանի Նախագահի հետ երկխոսությանն իր մասնակցությամբ: Այսպիսով՝ առկա է Հարավային Կովկասում կայունության և անվտանգության ռազմական խաթարման ռեալ սպառնալիք, ինչը միջազգային հանրության հատուկ ուշադրության կարիք ունի:

Ալիևի վարչակարգը, ձևականորեն չհրաժարվելով Մինսկի խմբի համա-նախագահության շրջանակներում կատարվող խորհրդատվություններից, իրականում շարունակում է իր ժողովրդին ու միջազգային հանրությանը պարտադրել Ղարաբաղյան հակամարտության ազգային-ազատագրական բնույթի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման օրինականության իրավաբանական ու քաղաքական փաստի խեղաթյուրված

¹⁸ Steu «Я гуманист в душе». Интервью Президента АзР А. Муталибова чешской журналистке Дане Мазаловой. «Независимая газета», 02.04.1992:

մեկնաբանությունը¹⁹: Ադրբեջանը շահարկում է այն հանգամանքը, որ Հայաստանը չօգտագործեց ստեղծված հնարավորությունը և չհասավ այն բանին, որ ՄԱԿ-ն ընդունի ԼՂ-Հ օրինական ստեղծման բացառիկության փաստը՝ ի տարբերություն նախկին խորհրդային տարածքում առկա մյուս բոլոր տարածաշրջանային հակամարտություններից («ուշացած» Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Մերձդնեստրյան հակամարտություններ)²⁰: Ալիևի վարչակարգը փորձում է Ղարաբաղյան հակամարտության նենգափոխված նույնականության հիման վրա ժխտել ԼՂ-Հ ստեղծման օրինականության, ԼՂ-Հ-ի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի փաստերը և ԼՂ-Հ ինքնապաշտպանության օրինապատշաճությունը: Չընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման օրինականությունը՝ Բաքուն մաս ժխտում է այն փաստը, որ համաձայն Լեռնային Ղարաբաղում կայացած օրինապատշաճ հանրաքվեի՝ Ադր-ն 1991 թ. դեկտեմբերից իր կազմում այլևս չի ներառում ԼՂ-Հ տարածքը²¹:

Ադրբեջանի իշխանություններն օգտագործում են իրենց ամխաջրածնային գրավչության ռեսուրսները այն նպատակով, որ միջազգային հանրությանը որպես հակամարտության լուծման հիմք պարտադրեն միջազգային իրավունքի նորմերին ու միջազգային պրակտիկայի ստանդարտներին համապատասխանող և ուղղակի ժողովրդավարության միջոցներով իրականացված Լեռնային Ղարաբաղի **ազատ ինքնորոշման** հարացույցի փոխարինումը Ադրբեջանի ու Հայաստանի միջև **տարածքային վեճի** հաղթահարման հարացույցով: Բաքուն հրամայաբար պահանջում է Լեռնային Ղարաբաղի սահմանափակ, ներքին ինքնորոշում միայն որպես Ադրբեջանի Հանրապետության սուբյեկտի²²:

¹⁹ Տես *Ильхам Алиев. Мои университеты. «Azerbaijan.az», 24 декабря 2007* (<http://azerbaijan.news.az/index.php?Lng=aze&Pid=19934>) (հատվածներ Իլիամ Ալիևի ուղիղ խոսքից. «Արդի աշխարհում իշխանության անցումը ընտանիքի մի անդամից մյուսին ինքնին չի համարվում հակաժողովրդավարական փաստ», «Ավելին. նշեմ, որ Հեյդար Ալիևի իսկական ժառանգորդն է կրտսեր որդին՝ մեր ընտանիքի ամենակրտսեր անդամ Հեյդար Ալիևը»):

²⁰ Տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» № 1410-1 от 3 апреля 1990 г.». «Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР», 1990, № 15; «Закон АЗР «Об упразднении НКАО АЗР», 26 ноября 1991 года». «Ведомости ВС АЗР», 1991, № 24; «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», 10 декабря 1991 г., Степанакерт, Нагорно-Карабахская Республика, Министрство Иностранных Дел (<http://www.nkr.am/rus/facts/referendum.html>):

²¹ Տես «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», «Декларация о государственной независимости Нагорно-Карабахской Республики». Е., 1995, сс. 85 – 89:

²² Տես «...Самоопределение может быть реализовано только в рамках территориальной целостности Азербайджана». «Еще раз о принципиальных позициях Азербайджана по вопросу урегулирования армяно-азербайджанского конфликта». «Day.Az», 14.05.2008 (<http://www.day.az/print/news/politics/118039.html>); նաև՝ «Азерб-

Անտեսվում է միջազգային պրակտիկան՝ կապված Էրիտրեայի, Արևելյան Թիմորի ու Կոսովոյի խաղաղ ինքնորոշումների հետ, երբ դրանք իրագործվեցին ոչ թե մետրոպոլիա հանդիսացող Եթովպիայի, Ինդոնեզիայի ու Հարավսլավիայի ամբողջ բնակչության, այլ միայն ինքնորոշվող էրիտրեացիների, հարավթիմորցիների ու կոսովցի ալբանացիների շրջանում անցկացված հանրաքվեի միջոցով:

Այդ պատճառով Ղարաբաղյան հիմնահարցի փոխզիջումային լուծման օրինական ուղիների ու միջոցների որոնումը, կատարված լինելով ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ արտացոլված և ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից որդեգրված վերոնշյալ միջազգային իրավական երեք հիմնարար սկզբունքների պահպանման պայմանով, ձեռք է բերում ռազմավարական տրամաչափ և կարող է դառնալ Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության ապահովման հիմք: Դրա համար կպահանջվի անցկացնել հանրաքվե ոչ թե Ադրբեյջանի Սահմանադրության մեջ սուլթանական տիպի իշխանության հակաժողովրդավարական էության ամրապնդմանը միտված հերթական տարրերի ներմուծման հարցով²³, այլ ԱդրՀ Հիմնական օրենքի 11-րդ հոդվածը ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ու Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային համաձայնագրերով հռչակված ազատ ինքնորոշման սկզբունքներին լիովին համապատասխանեցնելու նպատակով²⁴:

Տվյալ պարագայում հակամարտության լուծումը, մեր համոզմամբ, կարող է ձեռք բերվել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մոտակա փուլերում այն գործոնների բացառմամբ, որոնք սպառնում են Կովկասում

байджан создаст в Карабахе условия для двух общин». «BBC, Russian.com», 23.03.2009 (http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7958000/7958793.stm):

²³ Stu «Council of Europe. Venice Commission». The Official site of the Venice Commission ([http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD\(2005\)029-e.asp](http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD(2005)029-e.asp)); նաև՝ «Азербайджан меняет Конституцию». ИА «REGNUM», 18.03.2009 (<http://www.regnum.ru/news/1138356.html>); նաև՝ «На пленарной сессии Венецианской комиссии СЕ обсудят отзыв по поправкам в Конституцию Азербайджана». Агентство международной информации «Новости-Азербайджан», 12.03.2009 (<http://www.newsazerbaijan.ru/international/20090312/42771087.html>):

²⁴ Stu «Конституция АзР». Статья 11 – «государственные границы могут изменяться только на основе волеизъявления народа Азербайджана, выраженного путем референдума, проводимого по решению Мили Меджлиса Аз. Р (среди всего населения Азербайджана)»; նաև՝ «СБСЕ. Заключительный Акт». Хельсинки, 1 августа 1975 г. Принцип VIII. ОБСЕ (www.osce.org/documents/msc/1975/08/4044_ru.pdf); նաև՝ «Международный пакт о гражданских и политических правах. Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник международных договоров»; «Международный пакт об экономических, социальных и культурных правах. Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». «Центр ООН по правам человека». «Права человека: Сборник международных договоров»:

խաղաղության պահպանմանը: Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքի էությունը պարզելու համար անհրաժեշտ է ավելի հանգամանորեն ուսումնասիրել որոշ միտումներ, որոնք ուրվագծվում են վերջին վեց տարիների ընթացքում Սինսկի խմբի համանախագահների հովանու ներքո իրականացվող խորհրդատվությունների ժամանակ: Այս տարիներին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ խորհրդատվությունների օրակարգում ներառվեց այն փոխզիջման բանաձևը, որով արևմտյան փորձագետների խորհրդով հանդես եկավ հայկական կողմը, այն է՝ չնայած 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում կայացած հանրաքվեի օրինապատշաճությանը, նախկին ԼՂԻՄ-ի բնակչության շրջանում նոր հանրաքվե անցկացնելու հարցում շահագրգիռ կողմերի համաձայնությունը:

Որպես **քարի կամքի դրսևորում ակնկալվող նոր հանրաքվեի** անցկացման կողմնակիցների դիրքորոշման էությունն այն է, որ այդպիսով արտացոլվում է նրանց ցանկությունը՝ Ադրբեջանի ղեկավարությանը տալ իր ընտրողների առջև «պարզ դեմքով» հանդես գալու հնարավորություն: Այդ մտահղացումը պետք է մեղմեր պետական հակահայկական քարոզչության ռևանշիզմով թունավորված ադրբեջանցիների դժգոհությունը միջազգային իրավունքի և միջազգային պրակտիկայի նորմերին ու ընթացակարգային պահանջներին լիովին համապատասխանող հանրաքվե անցկացնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի սպասվելիք հաստատումից:

Սակայն երկրորդ հանրաքվեի միջոցով ադրբեջանական իշխանությունների «դեմքը պարզեցնելու» վերաբերյալ Արևմուտքի առաջարկությունը Բաքվի կողմից ցինիկորեն վերածվեց մի խարդախ հնարի, որը միաված էր 1991 թ. հանրաքվեի ու անկախ դարաբաղյան պետականության օրինականության նկատմամբ վստահության քայքայմանը: Նախագահ Ի. Ալիևը փորձում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքն ու նրա օրինապատշաճ կամաարտահայտման փաստը նենգաբար կեղծել Լեռնային Ղարաբաղին անկախություն տալու անհնարինության վերաբերյալ իր հայտարարություններով²⁵: Դեռ ավելին. Նախագահ Ի. Ալիևը պարբերաբար հանդես է գալիս Ղարաբաղի համար պատերազմը ինքնապաշտպանության

²⁵ Տես *Ильхам Алиев*: «Нагорному Карабаху никогда не будет предоставлена независимость». Заявления президента Ильхама Алиева на заседании Совета Безопасности. «Day.Az», 07.04.2009 (<http://www.day.az/news/politics/152509.html>); նաև՝ «Карабах никогда не будет независимым: *Ильхам Алиев*». ИА «REGNUM», 08.04.2009 (<http://www.regnum.ru/news/fd-abroad/karabax/1148033.html>); նաև՝ *Ильхам Алиев*: «Мировое сообщество осознает неправоту Армении, но закрывает на это глаза». «Day.Az», 18.04.2008 (<http://www.day.az/news/politics/115065.html>); նաև՝ *Ильхам Алиев*: «Еще раз хочу сказать, что время вовсе не работает на Армению, а наоборот. Никакая зарубежная помощь, поверьте, в этот раз им не поможет». «Day.Az», 13.09.2007 (<http://www.day.az/news/politics/91887.html>);

պատրվակով վերսկսելու՝ փաստորեն օրինական ԼՂՀ-ի դեմ երկրորդ զինված ազդեցիկ ձեռնարկելու սպառնալիքներով²⁶:

Մինույն ժամանակ, առաջին փուլում փախստականներին ու ժամանակավոր տեղահանվածներին Ղարաբաղ վերադարձնելու և ԼՂՀ անվտանգության գոտուց տարածքներ հանձնելու վերաբերյալ ներկայումս քննարկվող առաջարկությունները պարունակում են Ղարաբաղում ազգամիջյան լարվածության վերականգնման ու կայունության խախտման սպառնալիք, որը կհանգեցնի նոր գաղութարարական պատերազմի հրահրման: Նման պայմաններում ոչ միայն պրոբլեմային հարց է դառնում երկրորդ հանրաքվեի անցկացումը քննարկվող 10-15 տարվա հեռանկարում, այլև հարցականի տակ կարող է դրվել ընդհանրապես նման հանրաքվեի անցկացման հնարավորությունը:

Եվ այսպես. Ղարաբաղում Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքը միանգամայն ռեալ է: Տեսանելի ապագայում ռեալ են դրա սանձազերծման հետևյալ երկու սցենարները.

- առաջին սցենարը միջազգային հանրության առջև իրեն արդարացնելու տեսակետից Բաքվի համար ավելի նախընտրելի է. այն հիմնվում է ադրբեջանցի փախստականների ու ժամանակավոր տեղահանվածների՝ Ղարաբաղ վերադարձի դեպքում տեղի հայության հետ ընդհարումներից նրանց Ադրբեջանի զինված ուժերով պաշտպանության պատրվակի մոգոմման վրա: Խոսքը վերաբերում է Ադրբեջանի պլաններին՝ նախքան երկրորդ հանրաքվեի անցկացումը փախստականների ու տեղահանվածների արագ վերադարձն օգտագործելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի չորոշվածությամբ պայմանավորված հին հայ-ադրբեջանական միջհամայնքային թշնամանքը հրահրելու նպատակով,

- երկրորդ սցենարը Բաքվի համար պակաս ցանկալի է. այն կապված է Ադրբեջանի կողմից մտացածին ինքնապաշտպանության իրավունքը միջազգային հանրությանը հիմնավոր կերպով ներկայացնելու բարդության հետ, քանի որ հայկական կողմը կատարում է 1994 թ. ՀՀ-ի, ԱդրՀ-ի և ԼՂՀ-ի միջև կնքված զինադադարի համաձայնագիրը և մասնակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ խորհրդատվություններին²⁷:

²⁶ Տես «Алиев допускает возобновление войны в Карабахе». ИА «Lenta.ru», 10.07.2006 (<http://lenta.ru/news/2006/07/10/aliev/>); նաև՝ ««Вероятность возобновления войны возрастает»: Нагорный Карабах за неделю». ИА «REGNUM», 13.07.2007 (<http://www.regnum.ru/news/856254.html>); նաև՝ «Азербайджан готов силой вернуть Нагорный Карабах». ИА «Lenta.ru», 24.01.2006 (<http://lenta.ru/news/2006/01/24/war/>):

²⁷ Տես «Բիշքեկյան արձանագրություն»: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Արտաքին գործերի նախարարություն (<http://www.nkr.am/hy/document/43/>), նաև՝ «Бишкекский протокол». Личный сайт Владимира Казимирова (<http://vn.kazimirov.ru/doc9.htm>):

Ամփոփելով ելույթը՝ փորձենք տալ այն հարցի պատասխանը, թե ինչպես Հարավային Կովկասում պահպանել կայունությունն ու ապահովել անվտանգությունը, եթե Ադրբեջանի կողմից նոր գաղութարարական ագրեսիայի անթաքույց նախապատրաստումը կրկնօրինակում է անցած տարի Հարավային Օսեթիայում տեղի ունեցած պատերազմի սանձազերծման սցենարը:

Առկա միտումների պայմաններում տարածաշրջանային անվտանգության շահերի տեսանկյունից ավելի պրագմատիկ է թվում այն առաջարկությունը, ըստ որի՝ երկրորդ հանրաքվեն անցկացվի ոչ թե փախստականների ու տարածքների պայթյունավտանգ վերադարձից հետո, այլ սկզբնական փուլում՝ Ղարաբաղի հայ ու ադրբեջանական համայնքների ներկայիս բնակության վայրերում՝ ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ վերահսկողությամբ և ուժային երաշխիքով: Ընդամին նպատակահարմար է հաշվի առնել Կոսովոյում ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ ներկայացուցչությունների գործունեության փորձը՝ Ղարաբաղյան հակամարտության յուրահատկությունների հաշվառմամբ²⁸: Ղարաբաղյան հակամարտության գլխավոր առանձնահատկություններն են այն փաստերը, որ 18 տարի անընդմեջ գործում են ժողովրդավարական եղանակով ընտրվող ԼՂՀ իշխանությունները, որոնք ի շահ ազգային ու միջազգային անվտանգության՝ արդյունավետ կերպով կատարում են ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նորմավորված պարտավորությունները, ինչպես նաև հակամարտության գոտում միջազգային խաղաղարարական ուժեր չլինելու պայմաններում կրակի դադարեցման ռեժիմի պահպանումը: ՈՒստի քաղաքական-անվտանգային հրամայական է դարաբաղյան կողմին վերադարձնել հակամարտության լիարժեք լուծման վերաբերյալ բանակցային գործընթաց:

Խաղաղ միջոցներով զինված հակամարտությունների լուծման նկատմամբ սույն մոտեցումը, որը համապատասխանում է ուժի չլիքառման, ազատ ինքնորոշման իրավունքի ու տարածքային ամբողջականության միջազգային իրավական սկզբունքներին, կարող է դառնալ նաև Հարավային Օսեթիայում ու Աբխազիայում նոր պատերազմի այլընտրանք: Իսկ համոզմամբ՝ մեր տարածաշրջանում զինված հակամարտությունների լուծման նկատմամբ առաջարկվող մոտեցման հետագա մասնագիտական մշակումը կօգնի համապատասխան ազգային ու միջազգային կենտրոններին տրամադրվող խորհրդատվություններին՝ նրանց կողմից հօգուտ Հարավային Կովկասում նոր պատերազմների բացառման ու տարածաշրջանային անվտանգության գործունե Գարտարապետության ձևավորման կայացվող արդյունավետ որոշումների ընդունման ժամանակ:

²⁸ Stu «The Official site of the United Nations Mission in Kosovo (UNMIK)» (<http://www.unmikonline.org/>); նաև՝ «OSCE Mission in Kosovo». The Official site of the OSCE (<http://www.osce.org/kosovo/>):

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԳՐՈՒՄ

Վ. Ն. ԿԱԶԻՄԻՐՈՎ, Արդարադատության նախարարի տեղակալ,

*Ռուսաստանյան դիվանագետների ասոցիացիայի նախագահի տեղակալ,
1992–1996 թթ. Լեռնային Ղարաբաղի գծով Ռուսաստանի միջնորդական
առաքելության ղեկավար, ՌԴ Նախագահի լիազոր ներկայացուցիչ,
ԵԱՀԿ Մինսկի խմբի մասնակից և Ռուսաստանի կողմից համանախագահ*

2009 թ. մայիսի 12-ին լրացավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում զինադադարի կնքման 15 տարին: Այն ժամանակ ռուսաստանյան դիվանագիտությանը հաջողվեց կողմերին համոզել դադարեցնել կրակն ու զանգվածային արյունահեղությունը, ձեռնամուխ լինել հայերի և ադրբեջանցիների միջև վաղեմի ու սուր վիճահարույց պրոբլեմների խաղաղ քաղաքական կարգավորմանը: Դա Խորհրդային Միությունում առաջին և առավել մասշտաբային զինված հակամարտությունն էր: ԽՍՀՄ փլուզումից հետո այն հանգեցրեց արդիական զենքի՝ տանկերի, հրթիռահրետանային համակարգերի, ավիացիայի կիրառմանը, մեծ տարածքների գրավմանը, միլիոնավոր տեղահանված անձանց ի հայտ գալուն, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի զանգվածային խախտումների:



Ղարաբաղում խաղաղ կարգավորման գործում Ռուսաստանը ներգրավվեց 1991 թ. սեպտեմբերին¹, ԵԱՀԿ-ն՝ կես տարի անց²: Մոսկվան իր անհատական, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմում ծավալած միջնորդական գործունեության մեջ ի սկզբանե գերակա էր համարում ռազմական գործողությունների դադարեցումը՝ ինչպես մարդասիրական, այնպես էլ քաղաքական ու պրագմատիկ նկատառումներով, քանի որ մարտերի ժամանակ իրավիճակը ծայր աստիճանի անկայուն է, և շատ դժվար է վարել բանակցություններ: Մինսկի խմբի մեր արևմտյան գործընկերները կրակի դադարեցումը չէին դիտում որպես բացարձակ գերակայություն:

Կողմերի համաձայնությամբ ռուսաստանցի միջնորդը զինադադարը ձևակերպեց որպես անժամկետ (լռելյայն համաձայնությամբ)³: ԵԱՀԿ շրջանակ-

¹ Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ բոլոր հիմնական փաստաթղթերը առաջին անգամ հրատարակվել են Ալի Աբասովի և Հարություն Խաչատրյանի «Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность» գրքում (Մ., 2004): 2006 թ. այդ գիրքը քարգնամվել է անգլերեն և խմբագրվել Բաքվում ու Երևանում: Տես էջ 115–117:

² Տես նույն տեղում, էջ 118–120:

³ Տես նույն տեղում, էջ 136–137:

ներում ընթացող բանակցություններն առայժմ ռեալ արդյունք չեն տվել, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե կողմերը կարող են ազատ կերպով վերսկսել պատերազմը: Կարևոր է օգտագործել բոլոր քաղաքական-դիվանագիտական և այլ բնույթի միջոցները, որպեսզի թույլ չտրվի ռազմական գործողությունների վերսկսումը:

15 տարվա ընթացքում աճել է մի ամբողջ սերունդ, սակայն նրա ապագան դեռևս ապահովագրված չէ. կհաջողվի՞ արդյոք պատանի աղբբեջանցիներին ու հայերին դառնալ հողագործ, ինժեներ, դասատու, թե՞ նրանցից շատերին նախանշված է նոր պատերազմում «թնդանոթի միս» դառնալու ճակատագիր: Ի՞նչ կողմնորոշում ընդունի երիտասարդությունը՝ ֆրանկո-գերմանական կամ ռուս-գերմանական հաշտության ու համագործակցության, թե՞ արաբա-իսրայելական փոխադարձ ատելության ու հակամարտայնության:

Շատ բան լուծվում է բանակցությունների սեղանի շուրջ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) մասնակցությամբ, բայց ավելի շատ՝ Աղբբեջանի, Հայաստանի և արդեն 20 տարի Աղբբեջանի համար անվերահսկելի դարձած Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) ներսում:

Վերջին տարիներին Ղարաբաղում կարգավորման կարևորությունն աճել է ոչ այնքան 15 տարվա զինադադարի բերումով, որքան Սահակաշվիլու օգոստոսյան արկածախնդրության պատճառով, իսկ այնուհետև՝ Աղբբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի նախագահների կողմից 2008 թ. նոյեմբերի 2-ին ստորագրված Մոսկովյան հռչակագրի⁴ ազդեցությամբ, մի փաստաթղթի, որը միանշանակ կերպով հաստատում է հավատարմությունը հակամարտության խաղաղ քաղաքական լուծման գաղափարին: Առաջին անգամ Աղբբեջանում և ՀՀ ղեկավարներն իրենց ստորագրությունը դրեցին այսքան կարևոր փաստաթղթի տակ, որը դարձավ Ղարաբաղյան կարգավորման գործում դարձյալ Ռուսաստանի ջանքերով ստեղծված փուլանիշ: Դիշտ է, այս փաստաթուղթը ՀՀ-ում և ԼՂ-ում առաջ բերեց տագնապ: Հայերից շատերը այդ փաստաթղթի մեջ տեսան միայն այն փաստը, որ ստորագրողների թվում չկար ԼՂ-ն, թերագնահատելով ուժի կիրառման կրկնության հնարավորության սահմանափակման հանգամանքը: Պարզ չէ, թե ով կարող էր ապահովել ԼՂ ղեկավարի ստորագրության կողքին Աղբբեջանի ղեկավարի ստորագրությունը: Անշուշտ, անհրաժեշտ է, որ ԼՂ-ն վերադարձվի բանակցային գործընթաց, սակայն տասը տարվա ընդմիջումից հետո դժվար է սպասել, որ նա անմիջապես կկարողանար իր ստորագրությունը դնել ամենաբարձր մակարդակի փաստաթղթի տակ: Ի դեպ, ոչինչ

⁴ Ств «Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации», 2 ноября 2008 г. Московская область, замок Майендорф. Официальный сайт Президента России (<http://www.kremlin.ru/text/docs/2008/11/208670.shtml>); նաև՝ «Декларация Азербайджана, Армении и России по Нагорному Карабаху». ИА «REGNUM» (<http://www.regnum.ru/news/1078268.html>):

չի խանգարում Ստեփանակերտին միանալու հռչակագրի հիմնադրույթներին: Որքան էլ կարևոր լինի Ստեփանակերտի մասնակցության հարցը, այդուհանդերձ, ռազմական գործողությունների կանխումն ավելի կարևոր է:

Ընթացիկ տարում արդեն կայացել է ԱդրՀ և ՀՀ նախագահներ Իլիան Ալիևի և Սերժ Սարգսյանի չորրորդ հանդիպումը՝ մայիսի 7-ին Պրահայում, և կայանալու է հինգերորդը՝ հունիսի 4-ին Սանկտ-Պետերբուրգում: Ղարաբաղի նկատմամբ ուշադրության մեծացմանը նպաստում է այդ գործընթացում Ռուսաստանի ու ԱՄՆ-ի ընդհանուր ակտիվացումը, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերություններում նշմարվող տեղաշարժը: Ջարգացման երկարամյա բացակայությունն իր տեղը զիջում է սպասումների աճմանը, սակայն դա կատարվում է առավելապես արտաքին դիմամիկայի ազդեցությամբ:

Երկու նախագահների՝ Պրահայում կայացած հանդիպումն արժանացավ հակասական գնահատականների, այնուամենայնիվ, ներշնչեց առաջընթացի որոշ հույսեր: Հնարավոր են նաև առաջխաղացումներ այս կամ այն «սկզբունքով», սակայն չի կարելի մոռանալ այն կանոնը, որ ոչինչ համաձայնեցված չէ, քանի դեռ համաձայնեցված չէ ամբողջը:

Մի ամբողջ շարք դժվարություններ տակավին հաղթահարված չեն: Ադրբեջանցիների և հայերի, ներառյալ՝ ղարաբաղցիների, շրջանում դեռ չկա փոխզիջումների դիմելու պատրաստակամություն: Առաջավարներն առայժմ նրանց իսկությամբ չեն նախապատրաստում զիջումների, ուստի անխուսափելի է լուրջ ներքին դիմադրություն: Մի շարք հարցերում կողմերն ունեն միմյանց բացառող դիրքորոշումներ: Առայժմ «խաղից դուրս» է երրորդ կողմը՝ ԼՂ-ն, որի ճակատագիրը դեռ մնում է որպես հակամարտության գլխավոր վիճահարույց հարց:

Հայերի համար գրավիչ է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ադրբեջանցիների համար՝ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը, թեև այդ երկու սկզբունքներն այս հարցում չեն կարող կիրառված լինել առանց վերապահումների: Հայերի համար ամենակարևորն է ԼՂ կարգավիճակի որոշումը, ադրբեջանցիների համար՝ 1992–1994 թթ. մարտերում կորցրած հողերը:

Ի դեպ, տարածքների գավթումն ու դրա անհանդուրժելիությունը ներկայումս Բաքվի գլխավոր խաղաքուղին են, որը բավական հաջող կերպով նա ներկայացնում է միջազգային հանրությանը: Ադրբեջանական քարոզչությունը հողերի գավթումը ներկայացնում է լոկ որպես այս պահի լուսանկար՝ քաջցնելով դրա առաջացման ամբողջ տեսաշարը: Ընդամին ամեն կերպ ճապաղեցվում է պատճառահետևանքային կապը. հայերը երբեք չէին կարողանա այդքան լուրջ կերպով ընդարձակել իրենց գավթումները, եթե չլինեին հարցը ուժով լուծելու Բաքվի համառ, բայց հակակառուցողական փորձերը, նրա հրաժարումը ռազմական գործողությունների դադարեցումից:

Նույն կերպ աղճատվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993 թ.⁵ բանաձևերի պահանջը՝ ազատել զավթված տարածքները: Չորս բանաձևերից միայն երկրորդում կա զավթված տարածքներից դարաբաղյան ուժերի անվերապահ դուրսբերման պահանջ, մինչդեռ Ադրբեջանի կողմից կրակի դադարեցման համաձայնության մի շարք խախտումների հետևանքով երրորդ ու չորրորդ բանաձևերում «անվերապահ» բառ չկա⁶, և ուժերի դուրսբերումը դարձավ կողմերի միջև բանակցությունների առարկա, ինչի վկայությունն են նաև նրանց այժմյան շփումները:

Այս և մեծ թվով այլ վիճելի հարցերի վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերումը միջազգային հանրությունը թողել է հայերին և ադրբեջանցիներին: Եվ դա ճիշտ է: Երիտասարդ պետությունները, որոնք դարձել են այս հակամարտության կողմեր, պետք է օժտված լինեն պայմանավորումակությամբ կամ համառորեն մշակեն նման կարողություն:

Իսկ ի՞նչն է միջազգային հանրության համար առավել կարևորը: (Երբեմն մենք կես լուրջ–կես կատակ ասում ենք՝ «Միայն թե՛ պատերազմ չլինի», սակայն նման թեմայով կատակել չի կարելի. ժողովուրդների համար դա շատ կարևոր հարց է): ԵԱՀԿ-ն, որը ձգտում է օգնելու այս հակամարտության խաղաղ լուծման գործում, այլ միջնորդներ պետք է իրենց գերակայությունների շարքում ունենան մի գերգերակայություն, հրամայական՝ *թույլ չտալ ռազմական գործողությունների վերսկսումը*, և հատուկ շեշտված երկու սկզբունքներ՝ *ուժի և դրա սպառնալիքի չկիրառում, վեճերի խաղաղ լուծում*, հատկապես որ դրանք ձևակերպված են իսկը հակամարտային իրավիճակների համար:

Ցանկացած չլուծված հակամարտությունում ամենակարևորն է չեզոքացնել ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքը: Առանց դրա հնարավոր չէ հասնել խաղաղ քաղաքական լուծման, ինչը մեկ անգամ ևս ապացուցում են Վրաստանի դեպքերը:

Կարգավորման օպտիմալ ու միակ բանական՝ բանակցային, խաղաղ միջոցը շատ աշխատատար է և կառավարող շրջաններից ու դիվանագիտական ծառայություններից պահանջում է տարիների, անգամ՝ տասնյակ տարիների համբերատարություն, իմաստություն ու ճարտարամտություն: Արկածախնդիր գործիչները ռազմական ճանապարհը համարում են վճռական ու արագ՝ կարծելով, թե դա կբարձրացնի իրենց վարկն այսօր ու պատմական դերը՝ ապագայում: Նրանք անգամ չեն պատկերացնում, որ արկածախնդրությունը կարող է հանգեցնել հենց հակառակ արդյունքի՝ տասնամյակների, երբեմն նույնիսկ դարերի կտրվածքով:

⁵ *Stu Ali Abasov, Haroutiun Khachatrian. Karabakh conflict. Variants of settlement: concepts and reality. Baku–Yerevan, 2006, PP. 123–132:*

⁶ *Stu նույն տեղում, էջ 127–132:*

Եթե դա ընդհանուր առմամբ ճիշտ է, ապա Ղարաբաղի դեպքում հատկապես ճիշտ է հետևյալ պատճառներով.

1) հատուկ հաշվառում են պահանջում Հարավային Կովկասի *աշխարհառազմավարական, այդ թվում՝ էներգետիկ, նշանակությունը, ինչպես նաև պայթյունավորանգությունը*: Նա Եվրոպայում արդեն սկսում է խաղալ Բալկանների դերը: Այլևս ոչ մի տեղ չկա նման սուր իրավիճակ: ՌԻժային ռեանշի ծարավի մասին Եվրոպայում խոսում է միայն Բաքուն (ճիշտ է, 2008 թ. օգոստոսից հետո՝ ավելի հազվադեպ ու ցածրաձայն): Նոր պատերազմը կուժգնացներ լարվածությունը, կհանգեցներ միջազգային ասպարեզում անկանխատեսելի հետևանքների: ՀԱՊԿ-ի անդամներին, ըստ երևույթին, հարկ կլիներ քննել իրենց պարտավորությունները: Արևմուտքը կտառապեր Կասպյան գոտուց նավթի ու գազի մատակարարումների ընդհատումներից, մատակարարումներ, որոնց ներկայումս այդքան ուշադրություն է հատկացնում,

2) պետք է հաշվի առնել նաև *երկու ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության լարվածությունը*: Նոր պատերազմը դարերով կամրապնդեր նրանց միջև թշնամանքը: Այստեղ խնդիրը սովորականից ավելի մասշտաբային է. ոչ միայն կարգավորել ներկայիս հակամարտությունը, այլև վերջ դնել հայերի և ադրբեջանցիների դարավոր «հաշիվների պարզմանն» ու ընդհարումներին, օգնել նրանց բռնելու պատմական հաշտության ուղին,

3) արդեն այսօր ազդեցիկ պետությունների ու միջազգային կազմակերպությունների մեծ թվով ղեկավարներ շեշտում են Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման անհրաժեշտությունը, հանդես են գալիս հատուկ հայտարարություններով, որ *այն չունի ռազմական լուծում*: Դրանք հասցեագրված են ոչ թե Երևանին և Ստեփանակերտին, այլ առաջին հերթին՝ Բաքվին, ընդ որում, դժվար է չհասկանալ, որ դա անմիջական նախազուշացում է. եթե գործը դրան հասնի, ապա նոր պատերազմ սանձազերծողը կմեկուսացվի:

Նոր ռազմական գործողություններն արդեն կվարեն ոչ թե կիսապարտիզանական, վատ զինված կազմավորումներ, այլ կանոնավոր, լավ վարժված ու նորագույն զենքով սպառազինված բանակներ, ինչը կհանգեցնի մասշտաբային ավերածությունների ու զոհերի, խաղաղ բնակչության նոր զանգվածային գաղթի, տարածաշրջանի զարգացումը կշրջի հակառակ ուղղությամբ: Պարզապես հանցագործություն է իրեն հաշիվ չտալ, թե անխուսափելիորեն ինչ ողբերգական հետևանքներ կունենար նոր պատերազմը այս երկու ժողովուրդների համար:

Սակայն խեղհեղության այս կրկնողական գալարը ևս *չի հանգեցնի հակամարտության վերջնական լուծման*: Ակնթարթային պատերազմի մասին երազանքները խորտակիչ են. արագ հաջողության հասնելու շանսերը շատ շուտ կվերանան: Կողմերի ուժերի մոտավոր հավասարության հետևանքով նոր

մենամարտի ելքը անկանխատեսելի է: Ակնհայտ են երկու՝ արտաքնապես հակասական, գործոններ, ընդամենը երկուսն էլ նոր պատերազմ սանձազերծողի համար անբարենպաստ են. հակառակորդի դիմադրությունը կերկարաձգի ռազմական գործողությունները, իսկ արտաքին՝ ազդեցիկ պետությունների ու միջազգային կազմակերպությունների արձագանքը, հակառակը, կպարտադրի դրանց արագ կասեցումը: Հնարավորություն կտա՞ն նրան, ով վերսկսում է պատերազմը, այն հասցնելու ավարտին, ուժով հասնելու իր նպատակներին: Չի կարելի հուսալ, որ հնարավոր կլինի բավական սեղմ ժամկետներում ռազմական կապիտուլացման հասցնելու հակառակորդին, իսկ պատերազմ սանձազերծողը կարող է ենթարկվել լիակատար քաղաքական կաթվածահարության: Սակայն առավել հավանական է, որ վճռորոշ գերազանցություն չլինելու հանգամանքը դարձյալ կողմերին նստեցնի բանակցությունների սեղանի շուրջ (միայն թե պարզ չէ՝ կրակի նոր դադարեցման պահի դրությամբ ի՞նչ պայմաններում, ուժերի ի՞նչ հարաբերակցությամբ և ի՞նչ դիրքերում): Ինչպես ասել է ամերիկյան դիվանագետ Ռենիել Ֆրիդը, պատերազմը հարցականի տակ կդնի Ադրբեջանի ապագան:

Այս ամենը միանշանակ կերպով պահանջում է պատերազմի առաջն առնել իրոք որ ցանկացած գնով: Առաջին հերթին հենց դրան պետք է ուղղված լինեն միջազգային հանրության, նախ և առաջ՝ ԵԱՀԿ ջանքերը: Ընդամենը վերջինս պետք է իր խաղաղարարական առաքելության կատարման մեջ լինի ավելի հաստատական ու հետևողական, կենսագործի ընդունված որոշումներն ու փաստաթղթերը: Կարելի է հասկանալ այն հանգամանքը, որ ԵԱՀԿ-ն և ազդեցիկ պետությունները չեն ցանկանում թելադրել կողմերին, թե ինչպես պետք է լուծել նրանց միջև ծագած վիճահարույց հարցերը, չեն ցանկանում այդ ոլորտում ճնշում գործել կողմերից որևէ մեկի վրա: Սակայն լիովին այլ են ստանձնած խաղաղարարական դերի, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման համար ամեն ինչ անելու իր իրավունքի ու պարտականության հաստատումը, հակազդեցությունն այն ամենին, ինչ խանգարում է դրան: *Այդ հարցում միանգամայն օրինաչափ է նաև ճնշումն* այն կողմի վրա, որը մոռացության է տալիս հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու իր պարտավորությունը:

Ինչպե՞ս են ընթանում գործերը վերջին տարիներին: Հիմնականում ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքներ է հնչեցնում և դրան նախապատրաստվում հակամարտության նախկինում տուժած կողմը՝ Ադրբեջանը:

Գաղափար չէ, որ 2003 թ. վերջից Նախագահ Իլիամ Ալիևը շատ ավելի ուղղակի ու հաճախակի է դիմում այդ հակամարտությունը ուժով լուծելու, Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականությունը «ցանկացած եղանակով» կամ «ամեն գնով» վերականգնելու սպառնալիքների,

քան դա անում էր Հեյդար Ալիևը⁷ (թեև ԱդրՀ հիմնադիրներն անմիջապես հրաժարվեցին այն ամենից, ինչը կապված էր ԱդրԽՍՀ-ի հետ, նույնիսկ դրա անվանումից* բացի արտաքին, այն ժամանակ՝ վարչական, սահմաններից): Ի. Ալիևը ԼՂ հայերին բացեփրաց առաջարկեց դուրս կորչել այնտեղից, եթե ԱդրՀ տարածքային ամբողջականությունը նրանց սրտովը չէ⁸: Հաճախ նա ասում է, որ ավարտվել է ոչ թե ամբողջ պատերազմը, այլ միայն դրա առաջին փուլը⁹: Նրան են կրկնում ԱդրՀ պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը և մի շարք այլ պաշտոնական անձինք:

Սահակաշվիլու արկածախնդրությունը որոշ չափով սթափեցրեց Բաքվին: Վերջինիս ռազմաշունչ հռետորությունը «փուստ անցավ», բայց ոչ երկար ժամանակով: Չնայած Մոսկովյան հռչակագրի ստորագրմանը՝ Ի. Ալիևը, թեև նախկինից ավելի զգուշորեն, այդուհանդերձ, կրկին ուժային ազդակներ է արձակում: 2008 թ. նոյեմբերի 27-ին իտալական հեռուստատեսությանը տված իր հարցազրույցում նա փորձում էր ապացուցել, թե իբր այդ փաստաթուղթը «չի գրկում Բաքվին հակամարտությունը ռազմական եղանակով լուծելու իրավունքից»¹⁰: Ռազմական միջոցների կիրառման հնարավորութ-

⁷ Տես «Ильхам Алиев: «Еще раз хочу сказать, что время вовсе не работает на Армению, а наоборот. Никакая зарубежная помощь, поверьте, в этот раз им не поможет»». Интервью Президента Азербайджанской Республики Ильхама Алиева корреспондентам литовской газеты «Verslo Zinios»/«Business news» и журнала «Verslo klase»/«Business class» Р. Стаселису и В. Ивановасу (<http://www.day.az/print/news/politics/91887.html>):

* «Մույն Սահմանադրության ուժի մեջ մտնելու օրից ուժը կորցնում է Ադրբեջանական Հանրապետության՝ 1978 թ. ապրիլի 21-ին ընդունված Սահմանադրությունը (Հիմնական օրենքը)»: Ինչպես երևում է այս արտահայտությունից, ԱդրՀ ներկայիս Սահմանադրությունը նույնիսկ չի համարձակվել տալ իր նախորդի անունը՝ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (տես «Конституция Азербайджанской Республики». «Переходные положения», п. 1. Официальный сайт Президента Азербайджанской Республики (http://www.president.az/browse.php?sec_id=52):

⁸ Տես «Поздравление Президента Ильхама Алиева народу Азербайджана по случаю Дня солидарности азербайджанцев мира и Нового года». Официальный сайт Президента Азербайджанской Республики, 31 декабря 2007 г. (http://president.az/articles.php?item_id=20080101020429299&sec_id=135):

⁹ Տես «Поздравление Президента Ильхама Алиева народу Азербайджана по случаю Дня солидарности азербайджанцев мира и Нового года». Официальный сайт Президента Азербайджанской Республики, 31 декабря 2008 г. (http://www.president.az/articles.php?item_id=20090101125530380&sec_id=135): նաև՝ «Война не закончилась»: Ильхам Алиев в новогодней речи заявил о готовности отвоевать Нагорный Карабах. ИА «REGNUM» (<http://www.regnum.ru/news/1107031.html>):

¹⁰ «Президент Ильхам Алиев дал интервью итальянскому телеканалу «RAI International», 25 ноября 2008 г. Официальный сайт Президента Азербайджанской Республики (http://www.president.az/articles.php?item_id=20081126093217748&sec_

յունը նա չբացառեց նաև ժողովրդին հասցեագրված իր ամանորյա ուղերձում¹¹:

Գրանով իսկ անտեսվում են Ադրբեջանի ստանձնած մի շարք ձևական ու բարոյական պարտավորություններ (գինադադարի անժամկետություն, ընդհուպ մինչև զինված հակամարտության կարգավորման մասին համաձայնագրի կնքումը¹² կրակի դադարեցման պահպանման պատրաստակամության վերաբերյալ հրապարակային հայտարարությունները, հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու պարտավորությունը՝ ստանձնած ԵԱՀԿ-ին ու Եվրախորհրդին անդամակցելու ժամանակ): Հաշվից դուրս է նաև նրա հոր օրոք ընդունված ԱդրՀ Սահմանադրությունը, որը մերժում է պատերազմը «որպես միջազգային հակամարտությունների լուծման եղանակի» (հոդված 9)*:

Անհաշտ թշնամանքը առաջ է բերել կողմերի խոտորումներ, շրջապատի սև-սպիտակ ընկալում. ամեն ինչ կա՛մ ադրբեջանամետ է, կա՛մ՝ հայամետ, ասես կյանքում այլ գույներ և այլ կողմնորոշումներ չկան: Բաքում իր ռազմատենչության քննադատությունն ընկալում է որպես ոչ այլ ինչ, եթե ոչ հայերի մեքենայություններ: Նա, ով տարիներ շարունակ ձգտել է հասնելու Ղարաբաղում արյունահեղության դադարեցմանը, ամեն ինչի մասին դատում է առաջին հերթին պատերազմի ու խաղաղության տեսանկյունից և այլ կերպ վարվել չի կարող: Նոր պատերազմը այս հակամարտության զարգացման ցանկացած այլ շրջադարձից անհամեմատելի վատ է: Բանը այն չէ, թե համակրում ես այս կամ այն կողմին, այլ այն, որ գիտակցում ես պատերազմի դաժան ու վտանգավոր էությունը, որը թերագնահատում է պաշտոնական Բաքուն:

id = 14); նաև՝ «Интервью Президента Азербайджана Ильхама Алиева итальянскому телеканалу «RAI International». «Бакинский рабочий» (<http://br.az/index.php?new sid = 137>).

¹¹ Տես «Поздравление Президента Ильхама Алиева народу Азербайджана по случаю Дня солидарности азербайджанцев мира и Нового года». Официальный сайт Президента Азербайджанской Республики, 31 декабря 2008 г.; նաև՝ «Война не закончилась»: Ильхам Алиев в новогодней речи заявил о готовности отвоевать Нагорный Карабах». ИА «REGNUM» (<http://www.regnum.ru/news/1107031.html>):

¹² Տես «Война 1991 – 1994 гг.». Официальный сайт «Нагорно-Карабахская Республика, Министерство иностранных дел» (<http://www.nkr.am/ru/the-war-of-19911994/83/>); նաև՝ «1994 Events». «Armeniadiaspora.com» (<http://www.armeniadiaspora.com/inside/history/1994.html>):

* Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածը, մասնավորապես, հայտարարում է. «Ադրբեջանի Հանրապետությունը մերժում է պատերազմը որպես այլ պետությունների անկախության նկատմամբ ոսնձգության միջոց և որպես միջազգային հակամարտությունների լուծման եղանակ» (տես «Конституция Азербайджанской Республики», Статья 9, «Вооруженные силы». Официальный сайт Президента Азербайджанской Республики (http://www.president.az/browse.php?sec_id = 52)):

Ոմանք այդ ռազմատենչությունը բացատրում են ներքաղաքական կարիք-ներով և չեն տեսնում ռեալ վտանգ, քանի դեռ ուժերի մոտավոր հավասարոթյունը ի դերև է հանում ակնթարթային պատերազմի հաջողության հետ կապված հույսերը: Սակայն ռևանշի սպառնալիքներն այդուհանդերձ վնասաբեր են. դրանք սերմանում են ատելություն ու լարվածություն, այլանդակում են պատերազմ չտեսած սերունդների հոգեկան աշխարհը:

Եվ բանը միայն հռետորականությունը չէ. կան վտանգավոր իրական նախաձեռնումներ՝ ռազմական ծախսերի կտրուկ աճում, կանոնավոր միջադեպեր: Ռազմատենչ քարոզչության հետ դրանք կազմում են լուրջ սպառնալիքների ու մարտահրավերների երրորդություն:

Ի. Ալիևը հայտարարում է, որ ԱդրՀ ռազմական ծախսերը վերջին հինգ տարվա ընթացքում աճել են ավելի քան 10 անգամ, 2008 թ. կազմել են 1,2 մլրդ դոլար, իսկ 2009 թ. կհասնեն 2,3 մլրդ դոլարի մակարդակի և շուտով կգերազանցեն Հայաստանի ամբողջ պետբյուջեն: Ռազմական ծախսերի բուռն աճումը ոչ թե պարզապես արտացոլում է բյուջեի մեծացումը, այլ կապված է ռևանշի կոչերի ու նախապատրաստման հետ: Բաքուն հայերին ներքաշում է սպառազինությունների մրցավազքի մեջ՝ ի վնաս ամբողջ տարածաշրջանի զարգացման: Հրացանը կրակում է ոչ միայն թատերաբեմում: ԵԱՀԿ-ն առաջժմ չի խոսում այդ մասին, թեև պետք է բարձրացնի իր ձայնը: Բայց՝ ոչ հետին թվով:

Լարվածության պահպանման և ուժգնացման միջոց են դարձել *միջադեպերը*: Ամեն օր ԱդրՀ ՊՆ-ն հայտնում է մի շարք շրջաններում հայերի կողմից կրակի դադարեցման ռեժիմի խախտումների մասին*։ Թվում է, թե մա մտահոգված է այդ հանգամանքով. չէ՞ որ զոհվում են մարդիկ, անգամ խաղաղ բնակիչներ: Բայց եթե այդպես է, ապա որտեղ են Բաքվի առաջարկությունները՝ ուղղված իրավիճակի շտկմանը: Ինչո՞ւ դրանք չկան: 1994 թ. Ադրբեջանը չդիմեց շփման գծից զորքերի հեռացմանը, իսկ հետագայում նույնիսկ իր դիրքերը մոտեցնում էր հայկական դիրքերին: Նա արդեն վաղուց չի կամենում կատարել կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդման համաձայնագիրը, որը պաշտոնապես ստորագրվել է ԵԱՀԿ հովանու ներքո 1995 թ. փետրվարի 4-ին և սահմանում է միջադեպերի հարթեցման կարգը: Հայաստանը և ԼՂ-ն հայտարարում են, որ պատրաստ են դարձյալ այն կատարելու, եթե նույն կերպ վարվի Բաքուն: Սաֆար Աբիևն արդեն շատ տարիներ լռում է, իսկ ԱդրՀ արտգործնախարար Էլմար Մամեդյարովը այս պրոբլեմի լուծումը հետաձգեց մինչև հակամարտության լուծումը: Միջադեպերի վտանգավորության հաստատումն էր դրանցից ամենամեծը, որ տեղի ունեցավ 2008 թ. մարտի 4-ին:

* Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը ամեն օր հրապարակում է հաղորդագրություններ՝ շփման գծի երեք, հինգ, երբեմն նաև յոթ-ութ տեղերում հայերի կողմից կրակի դադարեցման ռեժիմի խախտումների մասին:

Հատկանշական է նաև ԱդրՀ հրաժարումը առաջին գծից դիպուկահարների հեռացումից¹³: Այս ամենը ապացուցում է, որ միջադեպերը, չնայած մարդկային զոհերին, նույնիսկ պետք են ադրբեջանական ղեկավարությանը՝ լարվածության պահպանման և ուժգնացման, հայերի նկատմամբ անվստահության և ատելության տարածման համար:

Պե՞տք է, որ ԵԱՀԿ-ն պնդի այդ համաձայնագրի կատարման վրա: Ի դեպ, իր ակտիվներում նա այլ բան չունի էլ: Անհրաժեշտ են միայն կողմերի քաղաքական կամքն ու պատասխանատվությունը: Եթե Բաքուն դժգոհ է համաձայնագրին ԼՂ մասնակցությունից կամ որևէ այլ հանգամանքից, ապա կարող է առաջարկել փոփոխել, լրացնել այն կամ կնքել նոր համաձայնագիր: Հակառակ դեպքում ծառանում է խորհրդանշական, ծայր աստիճանի սուր հարց. *ո՞ւմ են պետք Ղարաբաղի վերաբերյալ համաձայնագրերը, եթե ինչ-որ մեկը դրանք չի կատարում:*

Բացասական է նաև Բաքվի համատարած հրաժարումը հայերի հետ ՈԿԿ, քաղաքագետների, իրավապաշտպանների, լրագրողների, ձեռնարկչության գծով շփումներից: Իհարկե, ադրբեջանական հասարակության մի զգալի մասը նվաստացման զգացում է ապրում՝ կապված 1994 թ. պարտության, ԼՂ-ի նկատմամբ վերահսկողության կորստյան և նրա սահմաններից դուրս գտնվող յոթ շրջանների գրավման հետ: Առավել ցավալի է մոտ 700 հազար հարկադրված վերաբնակների ճակատագիրը (նրանցից «միայն» մոտ 40 հազարն է ԼՂ ադրբեջանցի): Սակայն, ինչպես արդեն նշել ենք, դա զգալի չափով ԱդրՀ ղեկավարության թույլ տված սխալների արդյունքն է:

Ադրբեջանի քաղաքական վերնախավի համար որպես մասնակի սփոփանք է ծառայում այն փաստը, որ 10 տարի առաջ ԼՂ-ն հեռացվեց բանակցային գործընթացին անմիջական մասնակցությունից:

ԼՂ կարգավիճակի հարցում հակամարտություն ծագեց դեռ ԽՍՀՄ-ում: Այդ պրոբլեմը բարդացավ Խորհրդային Միության տարերային փլուզման հետևանքով, երբ անկախանալու պոռթկումը հաղթում էր ԽՍՀՄ-ից դուրս գալու կարգի մասին օրենքին: «Օրինապահ» արևմտականները նշանակություն չտվեցին իրենց համար օտար իրավական համակարգի այդ խախտումներին, իսկ այժմ դժվարությամբ են հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Ներկայումս այլ ճանապարհ չկա, քան ԼՂ բախտը որոշել բանակցությունների միջոցով (բայց ոչ առանց նրա մասնակցության) կամ էլ նրա բնակչության քվեարկությամբ, ներառյալ՝ ադրբեջանցիներին ըստ 1988 թ. ցուցակների: Ցանկացած խաղաղ ճանապարհով: Այդ հարցը հնարավոր չէ լուծել պատերազմի, ամբողջ տարածաշրջանի համար աղետի միջոցով:

¹³ Stu «Statement of the representative of the Azerbaijani Republic in the Permanent Council of OSCE in Vienna, 2009, 5 March» (http://www.osce.org/documents/html/pdftohtml/36661_ru.pdf.html):

Միննույն ժամանակ, ԼՂ-ն ԱդրՀ-ի համար, ի տարբերություն դարաբաղ-ցիներից, գոյատևման հարց չէ: Անգամ չվերահսկելով ԼՂ-ն և նրա շուրջը եղած շրջանները՝ ԱդրՀ-ն ի հաշիվ նավթի ուներ ՀՆԱ-ի աճման ամենաբարձր տեմ-պերը: Իհարկե, ադրբեջանցիների նախնիներն ապրել են այնտեղ, սակայն ամենևին էլ հասկանալի չէ, թե ինչու նրանք, չնայած ծնելիության բարձր ցուցանիշներին, ամբողջ 20-րդ դարի ընթացքում կազմել են բացահայտ փոք-րամասնություն: Նման անհամասնություն երբեք հնարավոր չէր ապահովել Պարսկաստանից հայերի որևէ ցարական տեղափոխմամբ: Հայերի թիվը Նախիջևանում շատ ավելի մեծ էր, քան Ղարաբաղում ադրբեջանցիներինը (և՛ բացարձակ, և՛ հարաբերական առումով): Մակայն հակասություններն ու հակամարտությունները հանգեցրին նրանց տարանջատման: Ի տարբերու-թյուն ադրբեջանցիներից, որոնք ցանկանում են վերադառնալ ԼՂ, հայերը Ադրբեջան, այդ թվում և Նախիջևան, վերադառնալուն չեն հավակնում: Ադրբե-ջանի համար ԼՂ-ն ոչ միայն իր մշակույթի օջախի շուրջ ձևավորված հուզակա-նություն է, այլև երիտասարդ պետության ինքնահաստատման միջոց:

Ինչպես վերը նշվել է, Բաքուն այսօր ակտիվ կերպով օգտագործում է 1991–1994 թթ. պատերազմից հետո հայերի կողմից Ադրբեջանի յոթ շրջանների երկարամյա զավթման անբնականությունը, սակայն համառորեն լռության է տալիս այն հանգամանքը, թե ինչպես է այն ծագել: Հայերի և ադրբեջանցիների մարտական գործողություններն էապես տարբեր էին: Ադրբեջանը, հակառա-կորդին գերազանցելով և՛ կենդանի ուժով, և՛ տեխնիկայով, ավելի հաճախ կիրառում էր հրետակոծումներ ու ռմբակոծումներ: Հայերը գերադասում էին ուժերը կենտրոնացնել վճռորոշ հատվածներում՝ մարտաբշակներ (ռեյդեր), ճեղքումներ ու գրավումներ ձեռնարկելու համար, դրանով իսկ ռազմաճակատը հեռացնում էին ԼՂ-ից և նրա շուրջը ստեղծում «անվտանգության գոտի»: Միջ-նորդները, հիմնականում՝ Ռուսաստանը, բազմիցս առաջարկել են դադարեց-նել ռազմական գործողությունները և նստել բանակցությունների սեղանի շուրջ: Հայերն ավելի հաճախ էին գնում այդ քայլին, իսկ Բաքուն, տարված լինելով իր գերազանցությամբ, առաջ էր քաշում զանազան նախապայմաններ, չորս անգամ խախտեց կրակի դադարեցման վերաբերյալ ձեռք բերված համաձայ-նությունները՝ ձգտելով վերադարձնել Շուշին ու Լաչինը և կորցնելով նոր շրջաններ: Եթե նա ավելի լուրջ կերպով գնահատեր իրավիճակը և ընդուներ խաղաղ առաջարկները, ապա հիմա հայերի հետ բանակցություններ կվարեր ոչ թե յոթ շրջանների, այլ միայն Շուշիի ու Լաչինի վերաբերյալ: ԱդրՀ ղեկավա-րությունը, գերազանահատելով իր ուժերը, էական դեր խաղաց հայերի կողմից իր տարածքների զավթման ընդարձակման գործում:

Հայերին հաջողվեց ձևավորել ամենակարճ ճակատային գիծը և հիմնա-վոր կերպով ամրացնել այն: Բանակցությունների ժամանակ ադրբեջանցիներն անընդհատ պահանջում էին ազատել զբաղեցված տարածքները, սակայն խու-

սափում էին ԼՂ-ին անվտանգության երաշխիքներ տալուց: Ի. Ալիևը սաստկացրեց հայերին ուղղված սպառնալիքները, ինչը գործնականում հակասում է Ադրհ շահերին: Այդ ո՞վ պատերազմի վերսկսման սպառնալիքի առջև կրողնի ավելի ձեռնտու և անրացված ռազմական դիրքերը: Բաքվում այդպես էլ չհասկացան, որ միայն ԼՂ-ին անվտանգության հուսալի երաշխիքներ տալու դեպքում հայերին կզրկեն գրաված տարածքները պահելու պատրվակից: Իսկ այնտեղ ամեն ինչ հակառակն է արվում: ՄԱԿ-ի կանոնադրության ու ինքնապաշտպանության իրավունքի վկայակոչումները չեն ծառայում իրեց նպատակին, քանի որ խոսքը ոչ թե Ադրբեջանի վրա արտաքին հարձակման մասին է, այլ այն մարտական գործողությունների արդյունքների, որոնք ինքը տարուց ավելի չէր դադարեցնում նույնիսկ ՄԱԿ-ի ԱԽ-ի 1993 թ. բանաձևերից հետո:

* * *

Հակամարտության բացասական ազդեցությունը լուրջ կերպով զգացվում է Հայաստանում և ԼՂ-ում: Այնտեղ չեն անտեսում Ադրբեջանին կանխիչ հարված հասցնելու հնարավորությունը, քանի դեռ նա չի հասել վճռական գերազանցության: Սակայն նրանց կողմից ռազմական գործողությունների վերսկսման վտանգն այնքան էլ մեծ չէ. դա նրանց ձեռնտու չէ: Մինևույն ժամանակ, քարոզչական ու տեղեկութային պատերազմի ոլորտում հայերը ևս բավականին ակտիվ են:

ԼՂ շուրջ լարվածության ուժեղացմանը նպաստում են հայ-դարաբաղյան «ծայրահեղ հայրենասերները», որոնք գրավված տարածքները համառորեն անվանում են «ազատագրված» և հանդես են գալիս դրանք Ադրբեջանին վերադարձնելու դեմ: Դա նշանակում է խաղալ հոգուտ ադրբեջանցի ծայրահեղականների ու ռևանշիստների, օգնել նրանց գործը տանել դեպի նոր արյունահեղություն: Իրատեսության փոխարեն առավելապաշտությունը, պահանջների անչափավորությունը ուղիղ ճանապարհ են դեպի ձախողում:

Ծայրահեղ տեսակետներ ունեցող հայերի, ըստ էության՝ կեղծ հայրենասերների արմատականությունը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ փոխադարձաբար ընդունելի հաշտության համաձայնագրի կնքման ճանապարհին: Հայաստանում առկա ներքաղաքական լարվածությունը նույնպես խանգարում է Գարաբաղի հարցում հանդիպակաց գիշումների որոնմանն ու փոխանակմանը:

Շատ տարիներ են կորսվել ԼՂ-ն բանակցային գործընթացում ներառելու համար: Դա հիմնականում Հայաստանի սխալն էր, որը նա թույլ տվեց 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի ամենակարգում: Բայց դա մաս ԵԱՀԿ թերացումն էր, քանի որ նա ձգտում էր սկսելու ցանկացած բանակցություններ՝ անգամ Բուդապեշտի գագաթնաժողովի որոշումներից ու ՄԽ համանախագահների մանդատից շեղվելու գնով (մինչդեռ և՛ մեկը, և՛ մյուսը նպատակաուղղված են ոչ

միայն ճանաչված պետությունների, այլև ընդհանրապես հակամարտության կողմերի միջև բանակցությունների ծավալմանը): Եվ այժմ պարզ չէ, թե երբ և ինչպես ԼՂ-ն կմիանա բանակցային գործընթացին: Դիշտ է, Ստեփանակերտը ևս ընդունել է սպասման բավական պասիվ դիրք և հազվադեպ է իրեն զգացնել տալիս:

* * *

Так или иначе, 26 августа 2008 г. все акторы столкнулись с новым Кавказским регионом с качественно новой повесткой дня. Работа над ее восприятием еще только начинается.

**ԻՐԱՆԻ
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ**

Դոցենտ Չալալ Դեյխանի



Կառուցվածքը

1. Անվտանգության հասկացությունը
2. Իրանի անվտանգային քաղաքականության (*մոտեցման*) եությունը
3. Իրանի ազգային անվտանգության շահերը Կովկասում
4. Իրանի ազգային անվտանգության նպատակները Կովկասում
5. Անվտանգության չապահովվածության պատճառները և դրանից բխող սպառնալիքները (*Իրանի տեսանկյունից*)
6. Համատեղ անվտանգության ուրվապատկերը (*մոդելը*)

2

Անվտանգության սահմանումը

Ա) *Բացասական*` «սպառնալիքի չլինելը», «հարաբերական ազատություն պատերազմից», «հարաբերական ազատություն կործանարար սպառնալիքներից», «ձեռք բերված արժեքների դեմ ուղղված սպառնալիքներ չլինելը»

Բ) *Դրական*` խոչընդոտել ազատ, (բարենպաստ) ցանկալի և անհրաժեշտ պայմաններին ու իրավիճակին` ազգային շահերի առաջնդման և երաշխավորման համար

3

**Իրանի անվտանգային քաղաքականությունը.
Երեք հեռանկար**

4

ա) Գաղափարախոսական

- Հեղափոխության տարածում
- Գաղափարախոսական շահերի հետապնդում.
խլամական արժեքների տարածում

5

բ) Հարձակողական ռեալիզմ

- Էքսպանսիոնիստական
- Ազդեցիկ
- Ապակառուցողական
- Օպորտունիստական

6

- Գործել նպատակադրված՝ վնասելով ու նվազեցնելով այլ տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների անվտանգությունը
- Ուրիշների ներգրավումը և դրա հետևանքները
 - Հավասարակշռում
 - Չսպում
 - Կասեցում

7

գ) Պաշտպանական ռեալիզմ

- Անվտանգության որոնում
- Անմիջական սպառնալիքների կանխում և դրանցից խուսափում
- Ակտիվ պաշտպանություն
- Վճռորոշ ներգրավվածություն

8

- Ուրիշների ներգրավումը և դրա հետևանքները
- Համաձայնություն
- Համագործակցություն

9

Իրանի ազգային անվտանգության շահերը

- ա) Սահմանների անվտանգություն
- բ) Տարածքային ամբողջականություն
- գ) Ազգային ինքնիշխանություն և անկախություն
- դ) Ազգային միասնություն
- ե) Ներքին կայունություն և զարգացում

10

Իրանի անվտանգային նպատակները

11

ա) Ապահովել ստատուս քվոն տարածաշրջանում

- Հարգել և պահպանել բոլոր երկրների ազգային ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը

12

բ) Չեզոքել և ապահովել կայուն, ուժեղ, օրինական և բարեկամական պետություններ

13

գ) Կանխել Կովկասյան տարածաշրջանի՝ որպես Իրանի դեմ ուղղված սպառնալիքի օգտագործումը և խուսափել դրանից

14

դ) Տարածաշրջանում խաղաղություն և կայունություն հետևյալ միջոցներով

- Մասնակցություն հակամարտության լուծմանը և ճգնաժամի կառավարմանը
- Երկկողմ և բազմակողմ համագործակցություն
- Տարածաշրջանի հետ տնտեսական, քաղաքական, մշակութային և անվտանգային հարաբերությունների բարելավում
- Միջնորդություն և հակամարտող կողմերի համոզում՝ արդար միջոցներ ու եղանակներ որդեգրելու գործում

15

Որովհետև

- Տարածաշրջանի խաղաղությունը, կայունությունը և անվտանգությունը նշանակալից դերակատարություն ունեն Իրանի տնտեսական աճման և զարգացման գործում
- Խաղաղ և կայուն Կովկասը կարող է լինել Իրանից էներգակիրների դեպի Եվրոպա արտահանման հիմնական ուղին

16

ե) Էներգետիկ անվտանգություն

- Իրանի էներգակիրների արտահանման հուսալի և անվտանգ ճանապարհ
- Տարածաշրջանի էներգակիրների արտահանում Իրանի տարածքով

17

զ) Չեզոքություն և կարգավորել տարածաշրջանային անվտանգային համակարգ՝ Իրանի ներառմամբ

18

Անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներ

19

ա) Ներքին/պետական

- Թույլ կամ չկայացած պետություններ
- Նույնականության, օրինականության և իշխանության ճգնաժամ
- Անջատողական և սեցեսիոնիստական տրամադրություններ
- Կայուն և հավասարակշռված զարգացման բացակայություն
- Տնտեսական անարդյունավետություն և անհավասարություն

20

բ) Տարածաշրջանային

- Տարածքային ու սահմանային վեճեր և ճգնաժամ
- Կազմակերպված հանցավորություն, բնրամիջոցների ապօրինի շրջանառություն ու զենքի տարածում
- Ծայրահեղականություն և ահաբեկչություն
- Վեճեր էներգառեսուրսների շուրջ և մրցակցություն դրանց տարանցման համար
- Գերազգայնամոլություն

21

գ) Արտատարածաշրջանային

- Արտատարածաշրջանային դերակատարների մրցակցություն Կովկասյան էներգառեսուրսների և դրանց տարանցման շուրջ
- Արտատարածաշրջանային դերակատարների միջամտություն տարածաշրջանային գործերին
- ՆԱՏՕ-ի ընդարձակում դեպի արևելք, ինչը հարուցում է Ռուսաստանի լուրջ հակազդում

22

ա) Սահմանում

- Տարածաշրջանի պետությունների կողեկտիվ և համագործակցային գործողություններ՝ ուղղված ընդհանուր հիմնախնդիրների համատեղ լուծմանը
- Տարածաշրջանային կառավարությունների և դերակատարների լայն շրջանակում մի շարք շարունակական, երկար ժամանակով ինտեգրված, համապարփակ գործողությունների իրականացում, ինչն ապահովում կամ ամրապնդում է կայունությունը, կանխում կամ մեղմացնում է ճգնաժամը և ճգնաժամների ի հայտ գալու դեպքում այլ գործողությունների հնարավորություն է տալիս

բ) Բնութագրեր

- Համապարփակ՝ նշանակում է ներառել անվտանգության բոլոր առումները և տարածաշրջանի բոլոր դերակատարներին
- Համապարփակ անվտանգություն՝ նշանակում է անվտանգության այնպիսի ռեժիմ, որը ներառում է իրենց տեսակով և առանձնահատկությամբ պետական դերակատարների հետ կապված ավանդական սպառնալիքները և ոչ ավանդական սպառնալիքներն ու մարտահրավերները
- Պետությունների միջև առավել համագործակցային, քան առճակատումային հարաբերությունների հաստատում
- Հակամարտությունների կանխման և կառավարման ռեժիմի հաստատում համապատասխան նորմերի շրջանակներում

գ) Սկզբունքներ/Լիազորություններ

- Ստատուս քվոյի ապահովում
- Ներածին տարածաշրջանային անվտանգություն՝ տարածաշրջանային դերակատարների համագործակցության միջոցով
- Արտատարածաշրջանային դերակատարների չմիջամտելը
- Տարածաշրջանային անվտանգության համաձայնեցված և կայուն կարգը
- Տարածաշրջանային անվտանգության ոչ գերիշխանական բնույթը
 - ԱՄՆ-ի արտածին գերիշխանությունը
 - Ռուսաստանի ներածին գերիշխանությունը
- Կովկասյան տարածաշրջանի կառուցողական դերը և մասնակցությունը համընդհանուր տնտեսության, խաղաղության և անվտանգության ոլորտներում

26

դ) Նախադրյալներ

- Տարածաշրջանային պետությունների բավարարվածություն գոյություն ունեցող կարգով
- Անվտանգության համատեղելի նպատակներ
- Տնտեսական, քաղաքական և անվտանգային փոխկախվածություն
- Հակամարտությունների լուծման խաղաղ եղանակի գերակշռում
- Արդյունավետ սկզբունքներ, կազմակերպվածք և ընթացակարգեր՝ ունակ դիմակայելու անվտանգային պրոբլեմներին և մարտահրավերներին
- Սպառնալիքների ընդհանուր ընկալում, եթե նույնիսկ դրանց ընդհանուր պատասխանի բնույթը դեռ ընկալված չէ
- Անվտանգության նախընտրում հակամարտություններից և պատերազմից
- Համապարփակ և կայուն զարգացում

27

ե) Արգելքներ/Խոչընդոտներ

- Քաղաքական և գաղափարախոսական տարբերություններ
- Տարբեր քաղաքական համակարգեր
- Տարբերություններ տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների միջև
- Տարբեր պետությունների միջև անհավասարակշռություն և թույլ պետություններում խոցելիության զգացում

28

- Տարածաշրջանում թերահավատության և անվստահության զգացումը
- Արտատարածաշրջանային մրցակցությունը՝ էներգառեսուրսների և գերիշխելու համար
- Ռազմական դաշինքների պայքարն ու հակակշռումը
- Տարածաշրջանային որոշ դերակատարների մեկուսացում անվտանգության կազմակերպման գործերից
- Տարածաշրջանային անվտանգության կախվածություն արտատարածաշրջանային տերություններից
- Արտատարածաշրջանային միջամտություններ
- Տարածաշրջանի ռազմականացում

29

զ) Առաջարկություններ

- Խթանել համապարփակ և կայուն զարգացումը
- Համախմբել օրինական, զարգացած և ուժեղ պետությունները՝ ունակ կանխելու և կառավարելու ճգնաժամները
- Նվազեցնել արտատարածաշրջանային տերություններից տարածաշրջանային կախվածությունը
- Թուլացնել լարվածությունը և ձևավորել վստահություն
- Անվտանգային նպատակներն ու շահերը դարձնել թափանցիկ

30

- Կատարելագործել տարածաշրջանային հաղորդակցության, փոխգործության, գործարքների կնքման և փոխադրումների համակարգը
- Նվազեցնել տարածաշրջանային փոխկախվածությունը
- Ձևավորել համապարփակ անվտանգության կազմակերպվածք

30

է) Տարբեր անվտանգային նախաձեռնություններ

- Ընդհանուր Կովկասյան տուն (*Էդուարդ Շևարդնաշե*)
- 3+3 բանաձև (*Իրան*). երեք կովկասյան պետությունները՝ + երեք հարևան երկրները (Իրան, Թուրքիա և Ռուսաստան)
- 3+1 (*Ռուսաստան*). երեք կովկասյան պետությունները + Ռուսաստանը
- 3+2 (*Թուրքիա*). երեք կովկասյան պետությունները + Թուրքիան և Ռուսաստանը
- 3+2 (*Հայաստան*). երեք կովկասյան պետությունները + Իրանը և Ռուսաստանը
- 3+3+2 (*Հայաստան*). երեք կովկասյան պետությունները + երեք հարևան երկրները + ԱՄՆ-ը և ԵՄ-ը
- 3+3+1 (*Իրան*). երեք կովկասյան պետությունները + երեք հարևան երկրները + ԵՄ-ը:

31

ը) Տարբեր նախաձեռնությունների ընդհանուր կետերը

- Տարածաշրջանում խաղաղությունը, անվտանգությունը և կայունությունը
- Տարածաշրջանի բոլոր երկրների պետական ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության պահպանումը
- Էներգետիկ անվտանգությունը
- Համապարփակ և կայուն զարգացումը
- Տարածաշրջանի ապառազմականացումը
- Վեճերի խաղաղ լուծումը և ճգնաժամային կառավարումը

32

IRAN'S SECURITY APPROACHES TO THE SOUTH CAUCASUS

Associate Prof. Jalal Dehghani

1

Structure:

1. The concept of security
2. The Nature of Iran's Security Policy (*approach*)
3. Iran's National security interests in the Caucasus
4. Iran's National security objectives in the Caucasus
5. Threats and causes of insecurity
(*from the Iranian point of view*)
6. Cooperative security framework (*model*)

2

Definition of Security:

- a) *Negative*: «absence of threat», «relative freedom from war», «relative freedom from harmful threats», «absence of threats to acquired values»
- b) *Positive*: to feel free, (favorite) desirable and appropriate conditions and situation for pursuing and securing national interests

3

Iran's Security Policy: Three Perspectives

4

a) Ideological

- Spread of revolution
- Pursuing ideological interests:
Expansion of Islamic values

5

b) Offensive Realism

- Expansionist
- Aggressive
- Destructive
- Opportunist

6

- Acting intentionally to harm and reduce security of other regional and extra-regional actors
- Implications and consequences for others
 - Balancing
 - Containing
 - Deterring

7

c) Defensive Realism

- Seeking security
- Preventing and avoiding immediate threats
- Active defense
- Decisive engagement

8

- Implications and consequences for others
 - Accommodation
 - Cooperation

9

Iran's National Security Interests

- a) Borders security
- b) Territorial integrity
- c) National sovereignty and independence
- d) National unity
- e) Internal stability and development

10

Iran's Security Objectives

11

a) Maintaining status quo in the region

- Respecting and preserving national sovereignty, independence and territorial integrity of all countries

12

b) Formation and maintenance of stable, strong, legitimate and friendly states

13

c) Preventing and avoiding the Caucasus region to be used as a threat to Iran

14

d) Peace and stability of the region through:

- Participation in conflict resolution and crisis management
- Bilateral and multilateral cooperation
- Improvement of economical, political, cultural and security relations with the region
- Mediation and persuasion of conflicting parties to adopt just measures and means

15

Because:

- Peace, stability and security of the region play significant role in economic growth and development of Iran
- Peaceful and stable Caucasus could be a main export route for Iran's energy to Europe

16

e) Energy security

- A safe and secure route for exportation of Iran's energy
- Exportation of the region's energy through Iran

17

**f) Formation of a regional security system
and arrangement that include Iran**

18

Security Threats

19

a) Internal/National

- Weak or failed states
- Identity, legitimacy and authority crisis
- Separatist and secessionist sentiments
- Absence of sustainable and balanced development
- Economic inefficiency and inequality

20

b) Regional

- Territorial and border disputes and crisis
- Organized crime, drug trafficking and arms smuggling
- Extremism and terrorism
- Energy resources disputes and rivalry for its transition
- Hyper-Nationalism

21

c) Extra-regional

- Extra-regional actors' rivalry on the Caucasian energy resources and its transition
- Extra-regional actor's interference in regional affairs
- NATO expansion towards the east that causes a Russian serious reaction

22

Cooperative Security Framework

23

a) Definition

- Collective and cooperative actions of regional states to solve common problems together
- The set of continuous, long-term integrated, comprehensive actions among a broad spectrum of regional governments and actors that maintain or enhance stability, prevent or mitigate crisis and enable other actions when crises occur

24

b) Characteristics

- Comprehensive meaning to include all aspects of security and all of the regional actors
- Comprehensive security means a security regime that encompasses both the traditional threats associated typically and specifically with state actors, and non-traditional threats and challenges
- Establishment of a collaborative rather than confrontational relationships among states
- Establishment of a regime to prevent and manage conflicts within an agreeable framework of norms

25

c) Principles /Assumptions

- Maintaining status quo
- Endogenous regional security through cooperation of regional actors
- Non-interference of extra-regional actors
- Consensual and sustainable regional security order
- Non-hegemonic regional security order:
 - Exogenous hegemony of the USA
 - Endogenous hegemony of Russia
- Constructive role and participation of the Caucasian region in global economy, peace and security

26

d) Prerequisites

- Satisfaction of regional states from existing order
- Compatible security objectives
- Economical, political and security interdependence
- Prevalence of peaceful mode of conflict resolution
- Efficient rules, arrangements and procedures capable of meeting security problems and challenges
- Common perception of threats, even though a kind of common response still is unperceivable
- Preference of security over conflict and war
- Comprehensive and sustainable development

27

e) Obstacles /Impediments

- Political and ideological differences
- Different political systems
- Differences between regional and extra-regional actors
- Imbalances between different states and a sense of vulnerability among weaker states

28

- A sense of mistrust and uncertainty in the region
- Extra-regional rivalry over energy resources and domination
- Contending and counterbalancing military blocks
- Exclusion of some of the regional actors from security arrangements
- Regional security dependence on extra-regional powers
- Extra-regional interventions
- Militarization of the region

29

f) Suggestions

- Improving comprehensive and sustainable development
- Consolidation of legitimate, developed and strong states that are capable of crisis prevention and management
- Reducing regional dependence on extra-regional powers
- Détente and confidence building
- Making security objectives and interests transparent
- Improvement of regional communication, interaction, transaction and transportation
- Improving regional interdependence
- Establishing comprehensive security arrangements

30

g) Different security initiatives

- Caucasian common home (*Edward Shevardnadze*)
- 3+3 Formula (*Iran*): the three Caucasian states + three neighboring countries (Iran, Turkey and Russia)
- 3+1 (*Russia*): the three Caucasian states + Russia
- 3+2 (*Turkey*): the three Caucasian states + Turkey and Russia
- 3+2 (*Armenia*): the three Caucasian states + Iran and Russia
- 3+3+2 (*Armenia*): the three Caucasian states + three neighboring countries + the US and EU
- 3+3+1 (*Iran*): the three Caucasian states + three neighboring countries + EU

31

h) Common points of different initiatives

- Peace, security and stability of the region
- Preservation of national sovereignty, independence and territorial integrity of all
- Energy security
- Comprehensive and sustainable development
- Demilitarization of the region
- Peaceful resolution of disputes and crisis management

32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՓՈԽԼՐԱՑՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է

Թ. Ժ. ՊՈՂՈՍՅԱՆ, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն, Հայկական արվանդանի սանցիազիայի գործադիր տնօրեն



Ներածություն

Հարավային Կովկասում անվտանգության և կայունության հարցերը կարևոր են ոչ միայն գլխավոր դերակատարների էկզիստենցիալ շահերի, այլև տարածաշրջանային կայունության և Ռուսաստանի Գաշնության, Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի ու Եվրամիության քաղաքական ու անվտանգային մտահոգությունների տեսակետից:

Այսօր Հարավային Կովկասը ոչ միայն *դե յուրե* ճանաչված երեք երկրների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի, այլև հարևանների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի շահերի խաչմերուկ է: Տեսական հակամարտությունների առկայությունը և երեք չճանաչված, բայց *դե ֆակտո* գոյություն ունեցող պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի խնդիրը նույնպես մի իրողություն է, որը չի կարելի անտեսել:

Հայաստանում գերիշխող տեսակետներ են կայունության ձգտումը և հավատն այն բանի նկատմամբ, որ բոլորի շահերը կարող են միմյանց համապատասխանեցվել՝ առանց հետագա տարածայնությունների առաջացման:

Փոխլրացման քաղաքականության զարգացումը

1990-ական թվականների վերջին Հայաստանը հայտարարել էր, որ իր արտաքին քաղաքականությունը հիմնված կլինի փոխլրացման սկզբունքի վրա, այսինքն՝ նա կձգտի իր ազգային շահերը բերելու տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային տերությունների և միջազգային կազմակերպությունների մրցակցող գերակայությունների հետ ոչ թե անհաշտելի հակասության, այլ ներդաշնակության: Հենց այդ ժամանակվանից փոխլրացման խնդիրը, եթե անգամ ոչ իր ճշգրիտ նշանակությամբ, բազմիցս քննարկվել է և՛ հայ հասարակությունում, և՛ նրա վերնախավում, քանի որ Հայաստանը ավանդաբար ընկալվել է որպես իր արտաքին քաղաքականության գործողությունները և ճարտասանությունը ռուսական գործոնի, այսինքն՝ գլխավորապես ռուսական ազդեցության և շահերի հետ միշտ համադասող պետություն:

Իր անկախության առաջին իսկ օրից Հայաստանը զարգացման մոդելի որոնումների մեջ էր: Սկզբում նա իրեն հռչակեց շուկայական տնտեսությամբ ժողովրդավարական երկիր: Ժամանակի ընթացքում ընտրվեց պետական կառուցվածքի եվրոպական մոդելը, որը ենթադրում է խորհրդարանական տիպի պետության ստեղծում: Այդուհանդերձ, այս մոդելը շատ կարճ կյանք ունեցավ, և, ինչպես Խորհրդային Միության նախկին հանրապետությունների մեծ մասը, Հայաստանը նույնպես ընդունեց պետության կիսանախագահական մոդելը: Միայն վերջերս՝ կապված ԵՄ-ի կողեկտիվ անվտանգության և արտաքին քաղաքականության հաստատութենական ամրապնդման, հետագայում նաև՝ Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ Հայաստանի ներգրավվածության հետ, Հայաստանն սկսեց ավելի լրջորեն զգալ ԵՄ-ի շահերի ու գործողությունների ազդեցությունը: Այս գործընթացը ի գործու է Հայաստանը տանելու ավելի մեծ չափով եվրոպականացման ուղիով, ավարտին հասցնելու հաստատութենաշինությունը և ի վերջո հանգեցնելու եվրոպական տիպի պետության հաստատմանը՝ իր բոլոր ակնհայտ հետևանքներով:

Անվտանգության զգացումի խնդիրը դեռևս համընդհանուր է Հարավային Կովկասի բոլոր երկրների և սուբյեկտների համար: Այն պետք է փոխակերպվի համագործակցության զգացումի: Դա իսկապես դժվար աշխատանք է, որովհետև նշանակում է, որ բոլոր տևական հակամարտությունները պետք է լուծվեն, ինչը, սակայն, հնարավոր է միայն բոլոր դերակատարների մասնակցությամբ: Այս ուղղությամբ առաջին քայլը կարող է լինել համագործակցային միջավայրի զարգացումը: Ցավոք, գոյություն ունեցող կազմակերպությունները, ինչպիսին է ՄՕՏՀ-ն (*BSEC*), դեռ չունեն շարժիչ ուժ, այսինքն՝ մի երկիր, որը կարող է ստանձնել առաջավարի դեր: Դեռ ավելին. 2008 թ. Հարավային Օսեթիայի ու Աբխազիայի հետ կապված օգոստոսյան իրադարձությունները և Վրաստանի ու Ռուսաստանի թշնամությունը գրեթե ի չիք դարձրին նման հնարավոր զարգացումների հույսերը: Վերը նշված դերակատարների շահերը դեռ տարբեր են՝ տարբեր են արտաքին քաղաքականության օրակարգերը, ինչպես նաև ներքին հիմնախնդիրները:

Անվտանգության ապահովման Հայաստանի կարողությունը սահմանափակ է, քանի դեռ առկա է իր պայմանական անվտանգության և շրջափակումների խնդիրը: Չնայած դրան՝ Հայաստանը ներկայումս ձգտում է ակտիվորեն մասնակցելու այն բոլոր տարածաշրջանային ծրագրերին, որոնցում նրա արևելյան և արևմտյան հարևանների կողմից սահմանափակումներ չեն դրվում: Սակայն այն պահին, երբ իրավիճակը փոխվի, Հայաստանն իսկապես կդառնա լայն շրջանով տարածաշրջանային անվտանգային հարցերի լուծման մասնակից:

Այսօր Հայաստանի արտաքին քաղաքականությունը ենթարկվում է որոշ փոփոխությունների, որոնք կարելի է լավագույնս նկարագրել որպես երկար

ժամանակով հռչակված փոխլրացման քաղաքականության իմաստավորում: Կա իրական ցանկություն ամրապնդելու ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները՝ ներգրավվելով ԱԳԳԾ-ում, և ինտեգրվելու ԵՄ-ի հետ՝ ներգրավվելով Եվրոպական հարևանության ծրագրի գործողությունների պլանում:

Իհարկե, Ռուսաստանն ունի իր շահերը և հետամուտ կլինի դրանց, սակայն խելամիտ կլինի ակնկալել, որ այդ գործընթացում նա հաշվի կառնի իր դաշնակիցների շահերը ևս: Դրանք են՝ հյուսիս–հարավ տրանսպորտային միջանցքի (երկաթուղի) ստեղծումը, որը կկապի Ռուսաստանը, Ադրբեջանը և Իրանը, վերջերս փակված ռուս-վրացական սահմանի բացումը, միջպետական պարտքի զրոյացման դիմաց Ռուսաստանին հանձնված հինգ հայկական ընկերություններին ներդրումների կասեցման և գազի գնի հարցում նման մոտեցման հաղթահարումը: Այլ հարցերի շարքում տվյալ հարցերը չէին կարող չձախողվել, սակայն կարող էին ազդեցություն գործել հասարակական կարծիքի վրա:

Բոլոր այս խնդիրներն առաջացնում են որոշակի մարտահրավերներ, որոնց Հայաստանի ղեկավարությունը փորձում է դիմակայել: Հայաստանը ձգտում է այլ հաստատությունների և երկրների հետ ձևավորելու սերտ հարաբերություններ, որոնց միջոցով կլրացվեն եղած բացերը: Անվտանգության հարցերում դրանք ՆԱՏՕ-ն և ԱՄՆ-ն են, տնտեսական ու ժողովրդավարական բարեփոխումների և զարգացման հարցերում՝ ԱՄՆ-ը և ԵՄ-ն, իսկ էներգետիկ կարիքների համար՝ Իրանը:

Կապիտանի՞ արդյոք փոխլրացումը

Ռխումնասիրենք խնդիրներն առանձին-առանձին՝ սկսելով Հայաստանի և նրա հարևանների հետ հարաբերություններից: Իր անկախության վերականգնման առաջին իսկ օրից՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ից, Հայաստանը հայտնվեց բարդ իրավիճակում, դեմ առ դեմ իր արևելյան և արևմտյան հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Երկու հարևանների կողմից ներկայացված պահանջները Հայաստանին կստիպեին դիմելու անցանկալի զոհողությունների, ուստի Հայաստանն ստիպված էր հայացքը դարձնել հյուսիսային ուղղությամբ՝ դեպի Վրաստան և Ռուսաստան, իսկ հարավային ուղղությամբ՝ դեպի Իրան: Դեռ պահպանվում են 1991 թ. սահմանափակումները, այսինքն՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ փակ սահմանները: Ռխտի և միակ հնարավոր ընտրությունը Ռուսաստանի հետ դաշինքի հաստատումն էր: Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները եղել և մնում են կիզակետված փոխադրումային ճանապարհների և առևտրի վրա: Հայաստանի համար բավական էր, որ Իրանը հետամուտ էր հավասարակշռված հարաբերությունների և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ, մի դիրքորոշում, որը Իրանը շարունակում է պահպանել առ այսօր:

Փոփոխությունները Ռուսաստանի մոտեցումների մեջ, հատկապես՝

նրա ջերմացող հարաբերությունները Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, որոշակիորեն խարխուլեցին հայ հասարակության կողմից Ռուսաստանի՝ որպես հուսալի դաշնակցի ընկալումը¹: Հնարավոր է՝ դա այն իրողություններից մեկն է, որը Հայաստանին ստիպում է որոնել համագործակցության այլ ուղղություններ:

Համագործակցություն ՆԱՏՕ-ի հետ

Այն փաստը, որ Հարավային Կովկասը ներառվել է ՆԱՏՕ-ի գերակայությունների շարքում, ակնհայտ դարձավ ՆԱՏՕ-ի՝ 2004 թ. հունիսին Ստամբուլում կայացած գագաթնաժողովում: Վրաստանը շատ ակտիվ կերպով բախում է ՆԱՏՕ-ի դուռը, մինչդեռ Ադրբեջանը գործում է ավելի զգուշորեն: Հայաստանի առնչությամբ պետք է նշել, որ նա այժմ լիովին ընդունվում է որպես Եվրոպայի հարավարևելյան սահման և որպես այդպիսին՝ համարվում է անմիջական հարևան, որի վրա ազդում են եվրոպական անվտանգության համընդհանուր կառույցի ձևավորման գործընթացները: Բացի այդ, ըստ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար լորդ Ռոբերտսոնի՝ «Հայաստանը մի երկիր է, որն իր ձեռքում է պահում երկարատև խաղաղության ու կայունության բանալին այնպիսի կարևոր տարածաշրջանում, որը կապում է Եվրոպան ու Ասիան: Դա ավելի քան բավարար պատճառ է, որ միացյալ և ազատ Եվրոպայի որոնման գործում Հայաստանը համարենք կարևոր և արժեքավոր գործընկեր»²: Այդուհանդերձ, Հայաստանն իր արտաքին քաղաքականության օրակարգում չի դրել ՆԱՏՕ մտնելու հարցը: Այն չկա նաև ՆԱՏՕ-ի օրակարգում: Գագաթնաժողովից հետո ակնհայտ դարձավ, որ ՆԱՏՕ-ն որոշել է ոչ միայն ավելի լիցորեն վերաբերվել տարածաշրջանին, այլև դա անել առանց հապաղման: Բնական է, որ Դաշինքը ցանկանում է զարգացնել հարաբերությունները բոլոր երեք հարավկովկասյան երկրների հետ նույն տեմպով՝ դրանով իսկ ավելի արդյունավետ դարձնելով գործընթացը:

Այդ ամենը Հայաստանին առաջադրում է մի շարք հարցեր, որոնց, ամենայն հավանականությամբ, Երևանը առայժմ չի կարող պատասխանել: Հայաստանի ղեկավարները հրապարակավ շարունակում են կրկնել ավանդական արտահայտությունը, թե՛ «ՆԱՏՕ-ին միանալու հարցը ներկայումս մեր արտաքին քաղաքականության օրակարգում չէ»: Թեև որոշակի փոփոխություններ արդեն նկատվում են. մի քանի տարի առաջ այդ արտահայ-

¹ Stu «Armenia's Place and Role in the Region». Presentation of Public Survey Results; «Armenia's Foreign Policy, Orientation, and Attitude toward Power Centers of the World»; «Armenia's National and International Security in the Next Decade». Presentation of Expert Poll and Public Survey Results (<http://www.acnis.am/survey/>):

² «Armenia holds a key to lasting stability and peace in the region» (the exclusive interview of Lord George Robertson, NATO Secretary General, to Mediamax Agency). November, 2002 (http://www.mediamax.am/?sub=interview_george_robertson).

տությունը չէր ներառում «ներկայումս» բառը: Հայաստանի ցանկությունն արտահայտվեց 2005 թ. դեկտեմբերին ԱԳԳԾ-ին միանալով³, ինչը համարվում է ռեալ քայլ՝ ուղղված ՆԱՏՕ-ի հետ տարածաշրջանի երեք երկրների հարաբերություններում հավասար տեմպի ապահովմանը:

Գոյություն ունի նաև մեկ այլ հիմնարար պրոբլեմ. Հայաստանն իր աշխարհագրական դիրքի բերումով Ռուսաստանից կախված է առաջին հերթին տրանսպորտի և էներգակիրների առումով: Չի կարելի բացառել, որ որոշակի զարգացումների դեպքում Մոսկվան կարող է տրանսպորտը և էներգակիրները օգտագործել որպես Հայաստանի վրա ճնշման լծակներ: Եթե ՆԱՏՕ-ն իսկապես շահագրգռված է իր ազդեցության ոլորտում Հայաստանի ներառմամբ, ապա Արևմուտքը պետք է ճնշում գործադրի Թուրքիայի վրա, որպեսզի նա վերականգնի Հայաստանի հետ տրանսպորտային հաղորդակցությունը և հաստատի նորմալ բարիդրացիական հարաբերություններ: Այդ դեպքում Երևանը կունենա տարաշարժի ավելի լայն հնարավորություններ:

Եվրոպական հարևանության քաղաքականության դերը

Ինչպես նշված է «Եվրասիայում բարեփոխումներին ուղղված ԱՄՆ–ԵՄ համագործակցություն» տվյալների աղյուսակում, որը Եվրոպական և Եվրասիական գործերի պետական դեպարտամենտի բյուրոյի կողմից հրատարակվել է Նախագահ Բուշի Եվրոպա կատարած այցի առնչությամբ, «ԵՄ-ի Եվրոպական հարևանության քաղաքականությունը և ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագիրը օգնում են ձևավորելու ավելի սերտ կապեր Հարավային Կովկասի պետությունների և Արևմուտքի ավելի կայացած ժողովրդավարությունների միջև: Մենք շարունակում ենք համագործակցել, որպեսզի աջակցենք հետագայում Եվրասիայում ընտանիքին ինտեգրվելու Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի ձգտումներին»⁴:

Բնական է, որ Եվրոպան կաջակցի միայն այն երկրներին, որոնք պարտավորությունների կատարման հարցում կցուցաբերեն հաստատականություն: Ներկայումս մենք բախվում ենք գործողությունների մրցունակ պլանի մշակման անհետաձգելիության հետ: Իհարկե, հնարավոր մոտեցումներից մեկը ուղղակի փոխառման (*copy/paste*) մոտեցումն է՝ այնպիսի աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք են տարբեր երկրների փորձն ու իրականացվող բարեփոխումները:

Եվրոպական հարևանության քաղաքականության ոլորտում Հայաստանի ներգրավումը արտացոլվում է նաև հայ հասարակության մեջ, որը քննարկում

³ Տես «Հայաստան–ՆԱՏՕ ԱԳԳԾ»: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (<http://www.mil.am/arm/index.php?page=50>):

⁴ «U.S.-EU Cooperation on Reform in Eurasia» Fact Sheet». Bureau of European and Eurasian Affairs, U.S. Department of State. Washington, DC, 2005, 17 February (<http://www.state.gov/p/eur/rls/fs/42562.htm>).

Է Եվրամիության անդամակցության ստանդարտներին հասնելու գաղափարը: Նույնիսկ այն դեպքում, որ Եվրոպական հարևանության քաղաքականությամբ, ինչպես նաև Արևելյան գործընկերության նախաձեռնությամբ չի նախատեսվում երկրի լիարժեք անդամակցությունը ԵՄ-ին, քաղաքացիական հասարակության տարբեր խմբեր նոր եռանդով են քննարկում Եվրոպային ինտեգրման հարցը: Թվում է, թե այժմ շատ քիչ թվով մարդիկ են բանավիճում այն հարցի շուրջ, որ Եվրոպան մեր վերջին նպատակակետն է, համենայն դեպս, դա է ընդունվում բարձր մակարդակով արվող հայտարարությունների համատեքստում: Հետևաբար, ստացվում է, որ, մի կողմից, մենք արդեն ունենք վերջնական նպատակ՝ Եվրոպան, որը սահմանել է խաղի իր կանոնները, իսկ մյուս կողմից՝ մենք շարունակում ենք մշակել նույն խաղի կանոնների մեր տարբերակը: Բնականաբար, հարց է ծագում. ունե՞նք արդյոք հստակ մեխանիզմ, որը կարող է ընտրազատել ընդունվող որոշումները և ապահովել դրանց համապատասխանությունը այդ նպատակին: Եթե նպատակը Եվրոպան է, ապա խաղի կանոնները նույնպես պետք է եվրոպական լինեն. տրամաբանականը դա է:

ԱՄՆ-ի դերը

Միացյալ Նահանգները՝ որպես առաջատար համաշխարհային տեղություն, աշխարհի բոլոր տարածաշրջաններում ունի մեծամասշտաբ շահեր և իր ուժը դրսևորելու կարողություն: Կովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ի առաջնահերթ շահերը պայմանավորված են ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի ու թմրանյութերի տարածման դեմ ուղղված ջանքերով, ինչպես նաև նավթի ու գազի փոխադրառուղիների բազմազանեցմամբ (դիվերսիֆիկացիա): Հայաստան–ԱՄՆ հարաբերություններում գերիշխում են երեք գործոններ. ազդեցիկ ու լավ կազմակերպված սփյուռքի լոբբիստական գործունեությունը ամերիկյան ղեկավար շրջաններում, ԱՄՆ-ի դիրքորոշումը՝ աջակցելու Հայաստան–Թուրքիա հարաբերությունների լարվածության թուլացմանը, Հայաստան–Իրան հարաբերությունները՝ աշխարհում Իրանի դիրքի հետ կապված համընդհանուր հարցերի համատեքստում:

Հայաստանում գերիշխում է այն կարծիքը, թե ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ իր հարևաններ Ադրբեյջանի և Թուրքիայի համեմատությամբ այնքան էլ բարենպաստ չէ, և մենք չկանք ԱՄՆ-ի քաղաքական օրակարգում:

Մինչդեռ ԱՄՆ-ն էական ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում Հայաստանին՝ Ազատությանն աջակցման ակտի միջոցով: Այժմ նա օգնում է նաև Հայաստանի Զինված ուժերին: ԱՄՆ-ն ուշադրությամբ մշտազննում է երկրում և տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակը, ընտրությունները, բարեփոխումները: ԱՄՆ-ը համանախագահում է Միմսկի խմբում, որն զբաղվում է Լեռնային Ղարաբաղի հսկամարտության կարգավորմամբ: Այս-

պիտով՝ ԱՄՆ-ն ունի Հայաստանի վրա ճնշում գործադրելու լծակներ այն հարցերում, որոնք ԱՄՆ-ի շահերի տեսանկյունից հույժ կարևոր են:

ԱՄՆ-ի դեկավարները Հայաստանը համարում են իրենց համար կարևոր երկիր: 1992 թվականից Վաշինգտոնը Հայաստանի հետ իր հարաբերություններում հետապնդում է մի շարք ռազմավարական նպատակներ: Առաջինը աջակցությունն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծմանը: Երկրորդ նպատակն է Հայաստանը մոտեցնել Եվրասատլանտյան կառույցներին: Այստեղ հիմնականը թուրք-հայկական հաշտեցման խրախուսումն է և այդ երկու երկրների միջև սահմանների բացումը: Դա նաև ներառում է Արևելք-Արևմուտք ուղղությամբ տարածաշրջանային ինտեգրման առաջընթացին աջակցելու գաղափարը, ինչը վերջապես բազմակողմանիորեն կգարգացնի հարավկովկասյան երկրների հարաբերություններն այլ պետությունների հետ (բացի Ռուսաստանից)՝ սահմանափակելով Իրանի դերը տարածաշրջանում: Մինևույն ժամանակ, ԱՄՆ-ը դեմ չէ էներգետիկ բնագավառում Իրանի հետ Հայաստանի համագործակցությանը:

Հայ-թուրքական հարաբերություններ

Հայ-թուրքական փակ սահմանը ամենևին չի համապատասխանում եվրոպական ինտեգրման գաղափարին ու տրամաբանությանը: Դա նաև հակասում է միջազգային համաձայնագրերի և իրավական նորմերի գոյություն ունեցող համակարգին: Հայաստանը միշտ էլ հայտարարել է, որ պատրաստ է առկա պրոբլեմների և թյուրըմբռումների վերաբերյալ բանակցություններ վարելու՝ առանց որևէ նախապայմանի: Դրան հակառակ՝ Թուրքիան նախքան սահմանները բացելը և դիվանագիտական հարաբերություններ հաստատելը առաջ է քաշում որոշակի նախապայմաններ, որոնք կապված են՝

– Լեռնային Ղարաբաղի խնդրում Հայաստանի համար անընդունելի պայմանների պարտադրման հետ,

– 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստի ժխտման հետ,

– Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման պաշտոնական հռչակման հետ:

Հայտնի է, որ Թուրքիան էթնիկական կապեր ունի Ադրբեջանի հետ, սակայն Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև խնդիրները պետք է լիովին առանձնացվեն հայ-թուրքական օրակարգից: Հակառակ դեպքում դա ավելի ցցուն կդարձնի Լեռնային Ղարաբաղի խնդրում առկա էթնիկական չափումը: Այսպիսով՝ տվյալ նախապայմանը ավելի շուտ արհեստական է և հորինվել է սահմանի բացման քննարկումներից խուսափելու համար: Կասկածներ կան, թե արդյոք թուրքական կառավարությունը Հայաստանի հետ «խոսում է» բարի կամքի դիրքերից: Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման պահանջը նույնպես արհեստական է. Թուրքիան առարկում է Հայաստանի

անկախության հռչակագրում «Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանություն» ձևակերպման դեմ:

Նշենք, որ Հայոց ցեղասպանության ժխտման Թուրքիայի պաշտոնական քաղաքականությունը նրա իրավական համակարգում հավանության է արժանացել առանձին օրենքով: Դա ևս լայնորեն օգտագործվող «գենք» է Ցեղասպանության փաստը պաշտոնապես ճանաչած երկրների վրա ճնշում գործադրելու համար: Բայց եթե Եվրամիությանը անդամակցելու Թուրքիայի ձգտումը իսկապես լուրջ է, ապա նա պետք է նորմալ հարաբերություններ հաստատի Հայաստանի հետ, և, հետևաբար, բախվի Ցեղասպանության ճանաչման խնդրին:

Հաջողության հույս

Կովկասում Հայաստանը և նրա հարևանները ապրում են չլուծված տևական հակամարտությունների պայմաններում: Այնհայտ է, որ Հայաստանը հավատում է և մասնակցում է տարածաշրջանային համագործակցությանն ուղղված ջանքերին և վստահություն ստեղծող միջոցներ է կիրառում, որպեսզի ստեղծի այնպիսի միջավայր, որում կարող են արմատավորված հակամարտությունների համար գտնվել եվրոպական լուծումներ:

Նման բարդ իրավիճակին լուծումներ տալու համար հակամարտող կողմերը պետք է նաև կարողանան իրենց դիրքորոշումներին կառչելուց շարժվել դեպի իրենց շահերի ըմբռնումը:

Դա այն է, ինչ Հայաստանը ուզում է և կուզենար տեսնել նաև Լեռնային Ղարաբաղի և իր հարևանների կողմից. հեռանկարային, ստեղծագործական, հանդուրժողական պատասխաններ՝ հիմնված բարի կամքի վրա: Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման որոնվող բանաձևը ենթադրում է, որ վաղը մենք կապրենք ոչ թե թշնամու, այլ բարեկամական հարաբերություններ հաստատած հարևանի հետ: Երեք կովկասյան պետությունների տարածքները զատող սահմանները կնշեն միայն մեր մշակույթների և ինքնությունների նույնականացման սահմանագիծը, սակայն չեն խոչընդոտի ազատ փոխանակումներին և համագործակցությանը:

Այն, ինչին դեռ սպասում են Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը և ամբողջ տարածաշրջանը, անխախտ խաղաղությունն է: Եվ առավել հավանական է, որ նույնը կցանկանար նաև Ադրբեյջանի ժողովուրդը:

Հարավկովկասյան երեք պետությունների միավորումը այն պետությունների հետ, որոնք կան ավարտել են, կան շուտով կավարտեն իրենց ճանապարհը դեպի եվրասիականության կառույցներ, ունի անվտանգային խնդիրների մեղմացման համար բարենպաստ միջավայրի ստեղծման ներուժ՝ դրանով իսկ եվրասիականության ընկերակցությունում ընդարձակելով խաղաղության և անվտանգության գոտին:

Հարավային Կովկասը ոչ թե համագործակցային կամ կոլեկտիվ, այլ ընդհանուր անվտանգության տարածք է: Նպատակն այստեղ պետք է լինի ոչ թե նոր բաժանարար գծերի ստեղծումը, այլ ավելի մեծ չափով տարածաշրջանային անվտանգության ապահովումը:

Հարավային Կովկասի երկրներն ունեն իրենց առանձնահատկությունները, զարգացման ուրույն դինամիկան: Չկա մի կազմակերպություն, լինի դա ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ն կամ ԵՄ-ն, որը այստեղ կամ մեկ այլ տեղում լուծի բոլոր պրոբլեմները: Սակայն համագործակցության քաղաքականությունը կամրապնդի տարածաշրջանի բոլոր երկրների անվտանգությունը և կայունությունը: Եզակի հնարավորություն կա Սևծովյան տարածաշրջանը դարձնելու համագործակցության և կայունության գոտի՝ մի տարածաշրջան, որտեղ յուրաքանչյուր երկիր ունի իր ասելիքը, և դրանցից ոչ մեկի դեմ ուղղված սպառնալիքներ չկան:

Համատեղ գործունեությունը հնարավորություն կտա լիովին ըմբռնելու բոլոր ներգրավված կողմերի շահերը, ինչն էլ մեծապես կապահովի լիարժեք հաջողությունը:

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

«Աշխատանքային տետրերը» լույս են ընծայվում որպես ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված՝ ընդգրկված ԲՈՀ-ի կողմից հաստատված «Գոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի սմա-գրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայադրեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

«Рабочие тетради» издаются в качестве приложения к военно-научному журналу «Айккан банак» ИНСИ МО РА, включенному в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

The «Working notebooks» is published as an appendix to the defense-academic journal «Haikakan banak» of the INSS, MoD, RA which is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

Authors should give footnotes for the most important sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of a clear print quality. Please explain used acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory academic examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՈՐ

Պրակի գիտական խմբագիրներ՝

ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական,
Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ,
հակահարձակության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ),
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ) գեներալ-մայոր Հ. Ս. Զոթանջյան,
ԱՌ-ՀԻ-ի պետի տեղակալ-վերլուծական կենտրոնի պետ,
պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Տեր-Մսրեոսյան

Պատասխանատու քարտուղար՝ Ա. Մ. Շահվերդյան
Տեխնիկական խմբագրուժը՝ Ա. Պ. Նազարեթյանի
Չևավորող նկարիչ՝ Հ. Գ. Սահակյան
Լուսանկարչական ապահովուժը՝ Ա. Դ. Ներսիսյանի
Տեքստերի թարգմանությունը՝ Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի,
Ա. Մ. Մովսիսյանի, Գ. Ս. Չիլինգարյանի
Համակարգչային ապահովուժը՝ Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալսաֆյանի, Ա. Պ. Նազարեթյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆԵՑՈՒ փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանաչանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2009 թ.

Ստորագրվել է տպագրության 22.06.2009:
Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 60x84 1/16:
Տեքստը՝ 104 էջ:

Պայմանական տպագրական 7,5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱՎԵԼԿԱԾ 1(9). 2009